A la Rédaction de la Revue
vent des RR. PP. ès
VII Mechitheristengasse

ԱՐԵՒԵԼԵԱՆ
ՄԱՄՈՒԼ

ԱՄԻՍԱՅԻՆ

ԱԶԳԱՅԻՆ եւ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏԱՐԻ

1891

ՀՈՒԼԻՍ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԽԱԽԱՐԻ Ի ԼՈՅՍ	289
ԳՈՀԱՐ	300
ՀԱՅԳ ՆԱՀԱՊԵԿՆ	309
ԱԼԻ ՓՈՑՐՆ Վ.Ա.Ղ.Ա.Մ.Ե.Ռ.Ի.Կ	310
ԱՒՐ ՕՐ Ա՛Ւ Վ.	311
ՕՐԻՈՐԴ ՓԼԻՕ ՓՕՅՕՐՈՒԿՕՅԻ ԴԱԳԱՂԻՆ ԱՌՋԵԼ	313
ՍՏԱԽՕՍՈՒԹԻՒՆ	315
ՓՇՐԱՆՔ	319
Ի՞ՆՉ Է ՅԱՆՑԱՆՔԸ	321
ԿՈՎԿԱՍԵԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ	323
ՄՈՒՇՏԱԿԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԵՒ ՓՈՔԻ ՄԱՐԹ	327
ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ (Շ–ՀՐ)	330
ՄՏԱԾԻՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ (Զ–Ի)	332
ՀԵՐՔՄՆԱԳԻՐ	334
ԱԶԳ	336

ՁՄԻՒՌՆԻԱ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՄՈՒԼԵԱՆ

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ

Ի ՄԱՄՈՒՐԵԱՆՑ

				Դահեկան	արժ.	մ.
Ջատիկ (Վօլթէր)				5		
Ֆիլոքին (ապառաժ)						
Մէքթօ-Մձղաս, ժան և Քօլէն, Ձերմակ ու Սև (Վօլթէր)				4		
Վերթէր (Կէօթէ)				8		
Մեհնատանի աղբրին (Տ. Պոմոն)				3		
Յէվիւյի սափրիչը (Պոմարշէ)				3		
Գաղանիք Բարիզի (Լօժէն Սիւ)	8	հատոր		96	50	
Հազար ու մէկ գիշերներ	6	»		74	50	
Երեք Հրացանակիրք (Ա. Տիւմա)	3	»		36		
Քսան տարի ետք	»	»	4 »	46	50	
Պրաժլօն գերկոմս	»	»	12 »	115		
Ամօրի	»	»		16	50	
Իվանօէ (Վ. Սքօթ)	3	հատոր		29		
Անիծեալն (*** Ապրայ)	4	հատոր		38	25	
Ամուրիի մը երազները (Ք. Մարվէլ)				6	50	
Աչխարհի չրջանն ութսուն օրուան մէջ (Ժ. Վերն)				12	75	
Թորհրդաւոր կղզի (Ժ. Վերն)	3	հատոր		28		
Մանկտիք (Շանֆլէօրի)				9	25	
Ինպերիալեանի մը յիչատակք				8		
Հայկական նամականի (Վրոյր)				12	25	
Անգլիական նամականի կամ Հայու մը ճակատագիրը						
Համառօտ պատմ. Բնական գիտութեան (Ա. Պըքլէյ)				10		
Մանր վէպեր ու դասեր տղոց համար (ապառաժ)						
Բանալի հայերէն շարադրութեան Բ. տետր				2	50	
Գիտելիք ու պարտիք տղոց Դ. տետր				5		
Ընդհանուր պատմութիւն համառօտ Մաս Ա.				5		
»	»	»	» Բ.			
»	»	»	Հատոր Բ.			
Առաջին Ընթերցարան				2		
Երկրորդ ընթերցարան Գ. տետր				5		
Տունէն դուրս թափեցեալ				5		
Իրաւանութիւն Բ. տետր				6		
Առողջապահութիւն աղջկանց համար				4		
Արեւելեան Մամուլ 20 տարուան (1871–1890)				700		
Պատմութիւն Հայոց				5		
Նահապետ երգը (Օնէ)				5		
Ենթուզակ (Փորպէն)				3		

ԱՐԵՒԵԼԵԱՆ
ՄԱՄՈՒԼ

ԱՄՍԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԻԱ· ՏԱՐԻ 1891 ԹՈՒԼԻՍ

ԽԱԽԱՐԵ ԻԼՈՅՍ

ԴԼՈՒԽ ԺԴ·

ՄԻԹԷ ՆԷ Կ'ՅԻՇԷ՞

Ժամ էր վերջ տալ մեր տեսակցութեան։ Այնքան երկար տևեց այն որ սպասն ալ քանի անգամ ներս նայեցաւ նշանակական ակնարկով մը, իբր թէ ըսել կ'ուզէր թէ անյուսալի էր որ իմ ունեցած արտօնութեանս սահմանն անցնիմ։ Փափաք չունէի դատապարտին հետ աւելի ևս խօսակցիլ։ Իմ երկար ուղևորութեանս նպատակին հասեր էի։ Իմացեր էի ինչ որ կըրնայի իմանալ։ Գիտէի Բօլինի պատմութիւնը։ Սէնէրի լիովին խոստովաներ էր գործուած ոճիրն և այդ մարդն իրաւունք չունէր բնաւ իմ ակնածութեան։ Եթէ արդարդ իր լինէի անգամ անոր օգնելու, այդ օգնութեան միջոցները չունէի։ Ուրեմն ինչ հարկ կար աւելի ևս մնալ։

Բայց պահ մ'ևս մնացի։ Անպատում վիշտ կ'զգայի մտածելով որ եթէ երթայի և յայտնէի որ իմ գործս աւարտած է, կալանաւորն իսկոյն պիտի բանտարկուէր այն պազրալի քարայրն ուսկից դուրս ելած էր։ Ամեն մի վայրկեան որ իմ հետս մնար

իրեն թանկագին պիտի թուէր։ Երբէք նա չպիտի տեսնէր վերսային բարեկամի կամ ծանօթի մը դէմքը։

Սէնէրի խօսքը կտրած էր։ Գլուխն ընդ առաջ հակած կը նստէր, իբրև թշուառ մը՝ ցնցոտիկ, վայրագ և յուսահատ, այնքան վնատ ու նկուն որ կարելի չէր անոր յանդիմանութիւն մ'ընել։ Լուռթեամբ կ'նայէի անոր երեսը։

Ի վերջէ բերանը բացաւ.

— Պ. վօկան, ըսաւ, չէք կարող բնաւ արդարացնել իմ ընթացքս։

— Բնաւ, ըսի։ Այնպէս կ'երևի ինձ որ մեծ տարբերութիւն չկայ ձեր և ընկերակիցներուդ մէջ։

Սէնէրի ոտք ելաւ յոգնարեկ և հարցուց.

— Կ'յուսաք որ Բօլին բժշկուի։

— Կ'յուսամ — կ'յուսամ որ դինք քալառոյջ պիտի դանեմ վերադարձիս։

— Անշուշտ պիտի պատմէք Բօլինի թէ ինչ վիճակի մէջ գըտաք զիս. նէ աւելի երջանիկ պիտի լինի իմանալով որ Անտոնիի մահն անուղղակի կիս այս թշուառութեան հասուց։

Այդ տխուր խնդիրը կատարելու հաւանութիւն ցոյց տուի։

— Հիմակ պարտաւոր եմ վերադառնալ, ըսաւ նա, տեսակ մը սարսուռով, և իր դանդաղկոտ ոտքը պէտք ի դուռն ուղղելով։

Իր յանցանաց չնայելով՝ ուզեցի մի քանի խօսք ևս ըսել մեկնելէն առաջ։

— Պահ մը կեցիք, ըսի։ Խօսեցէք ինձ, կարող եմ արդեօք բան մ'ընել որպէս զի կեանքն աւելի հանգիստ անցնէք։

Նա թեթև մը ժպտեցաւ։

— Կարող էք ստակ — քիչ մը ստակ տալ ինձ. որպէս զի պահեմ և կալանաւորիս մի քանի պիտոյքը հոգամ։

Մի քանի ղրամատումս տուի ըղը իր ղրպանը ծածուկ տեղ մը պահեց։

— Մինչ աւելի կուզէք, հարցուցի։ Սէնէրի գլուխը ցնցեց։

— Կարծեմ թէ ծախսելէն առաջ այդ ղրամն իզմէ պիտի գողնան.

— Բայց միթէ միջոց մը չկայ որ անձի մը մօտ ղրամ թողում ձեր գործածութեան համար։

— Կարող էք գումար մը թողուլ սպայինն, թերևս, եթէ բարեսիրտ է և պարկեշտ, գոնէ մաս մը ձեռքս անցնի։ Բայց այդ անգամ երկբայելի է։ »

Խօսք տուի խնդիրը կատարել, և գիտէի որ դրամն Սէնէրիի ձեռքն անցնի թէ ոչ, դուն պիտի լինէիր այդ վարձն ընելուս համար։

— Բայց ինչ պիտի լինի ձեր ապագան. ուր պիտի տանին ձեզ, և ինչ կեանք պիտի վարէք։

— Մեզ չիտակ Սիպերիոյ ծայրը պիտի տանին — դէպ ի Նէրչինսք։ Ուրիշներու հետ ես ալ հանքաց մէջ պիտի աշխատիմ։ Բոլոր այդ ճամբան հետիոտն ու չղթայակապ պիտի ընենք։

— Ինչ սոսկալի ճակատագիր։

Սէնէրի ժպտաց։

— Իմ բոլոր քաշածներէս ետք՝ դրախտ մ'է որ իմ առջևս կ'պարզուի։ Երբ մարդ մը ռուսական օրինաց դէմ կ'մեղանչէ իր միակ յոյսն է որ անմիջապէս Սիպերիա ուղարկուի։ Այս կը նշանակէ դժոխքէն արքայութիւն դնալ։

— Ձեր իմանար այդ խօսքին իմաստը։

— Անշուշտ պիտի իմանայիք եթէ ինծի պէս անդատաստան և անդատապարտ ամիսներ անցնէիք։ Եթէ անլոյս, անօդ, նեղ խցիկի մը մէջ նետուէիք։ Եթէ լսէիք դրակից կալանաւորներ որ խելագարի պէս կ'աղաղակէին — խելագարութիւն՝ որու պատճառն է մենաւոր բանտարգելութիւն և անագորոյն վարմունք։ Եթէ ամեն առաւօտ երբ աչք բանալով՝ լսէիք — ես ալ մութը չհասած պիտի խելացնորիմ։ Եթէ դուք ալ սառէիք, դանակոծ սովալուկ տառապէիք, որպէս զի ձեր բարեկամնեբուն մատնու լինէիք։ Եթէ այնպիսի վիճակի մը մէջ ընկնէիք որ ձեր մահավճիռը ձեզի համար աւետարեր լուր մը լինէր։ Ահա այն ժամանակ, Պ. Վօկան, կարօտագին պիտի փափաքէիք կրել Սիպերիական մեղմիկ խստութիւնները։ Կ'երդնուիմ ձեզ, Պարոն, չարուեստակեց Սէնէրի աւելի աշխոյժ ու կրակոտ ձայնով քան ինչ որ ցոյց տուած էր ցարդ, որ եթէ Եւրոպիոյ բարեկիրթ ազգեր ռուսական բանտի մը սոսկալի անդիմադրելիութենց լուկ մէկ տասներորդը գիտնային պիտի ըսէին — մեղապարտ կամ անպարտ ոչ մի մարդկային էակ պարտի այս տանջանաց ենթարկել — և յանուն մարդկութեան պիտի դործէին . . . ։

— Բայց քսան տարի հանքաց մէջ։ Մինչ ապատուի յոյս չկայ։

Ո՞ւր կրնամ խոյս տալ։ Նայեցէ՛ք աշխարհացոյցը և տեսէ՛ք թէ ուր է Նէրչինսքը։ Եթէ երբէք խոյս տամ, միայն լեռներու

մէջ պիտի թափառիմ մինչև որ մեռնիմ կամ վայրեներու ճեռաք սպաննուիմ։ Ո՛չ, Պ. Վօկան, միայն վէպերու մէջ կան Սիպերիայէն փախուստներ։

— Ուրեմն ցմա՞հ պիտի մնաք ողջմելի գերի մը։

— Ձեմ կարծեր։ Մի անգամ Սիպերիոյ դատապարտներու մասին տեղեկութիւններ հաւաքեցի, և ձեզ ճշմարիտը խօսելու համար, զզուեցայ նկատելով թէ քանի թիւր է սովորական կարծիքն այս մասին։ Այժմ կ'յուսամ, որ իմ խուզարկութիւններս ճշմարտութիւնը երևան հանեցին։

— Ուրեմն այնքան խստիւ չէ՞ն վարուիր դատապատներուն հետ։

— Բաւական վատ է վարմունքն, քանի որ միշտ դադարտ մը փոքրիկ բռնաւորի մ'իշխանութեան ներքև կ'գտնուի։ Նոյնպէս տարակոյս չկայ որ մի երկու տարի հանքաց մէջ պիտի տառապիմ իրև սորուկ։ Բայց եթէ կարենամ դիմանալ ու ապրիլ, որ հաւանական չթուիր, կարելի է, չնորհ գտնելով իշխանապետին առջև, այդ տեսակ ծանր աշխատանքէ ազատիմ։ Հաւանական է անգամ որ թոյլ տրուի ինձ քաղաք մը բնակիլ և առլուստս ճարել։ Շատ յոյս ունիմ որ իմ բժշկական արհեստս օգտակար լինի ինձ։ Սակաւաթիւ են բժիշկներ Ասիական Սիպերիոյ մէջ։»

Թէև չէր արժանի, իր փափաքն արձագանք գտաւ սրտիս մէջ, բայց երբ Սէնէրիի երեսը նայեցայ, ապահովապէս գուշակեցի որ տարի մ'անգամ չպիտի կարող լինի տանիլ հանքային գործերու ծանրութեան։

Դուռը բացուեցաւ և սպայն վերստին աչք մը նետեց մեր սենեակը։ Հետզհետէ համբերութիւնը կ'հատներ։ Պատճառ մը չունէի աւելի երկարել խօսակցութիւնն, ուստի ըսի անոր որ քանի մը վայրկենէն պիտի լմնցնեմ խօսքս։ Գլուխն օրեց և քաշուեցաւ։

— Խօսեցէ՛ք, միթէ ուրիշ բան մը կարող եմ ընել, ըսի Սէնէրիի դառնալով։

— Ոչ ինչ չկայ — բայց կեցէ՛ք. մի բան կայ։ Մագարի, այդ ասլիրատը — վաղ կամ անագան պիտի գտնէ անշուշտ իր պատիժը։ Ես կրնամ իմ տանջանքս. նա ևս պիտի կրէ։ Երբ այդ ժամը հասնի, միթէ պիտի ջանաք իմացնել ինձ. թերևս դժուարին է կատարել այս խնդիրս, և բնաւ իրաւունք չունիմ այդ չնորհը սպասնելու։ Բայց դուք ևս այդ մասին հետաքրը-

քիր էք և կարող էք հաղորդել այդ ցանկալի լուրը։ Եթէ մին-չեւ այն ժամանակ ողջ մնամ, իրաւի աւելի ինքզինքս երջանիկ պիտի համարիմ . . . ։

Առանց իմ պատասխանիս սպասելու՝ Սէնէրի չտապաւ քա-լեց դէպ ի դուռն, և բանտապահին ընկերակցութեամբ յառաջ անցաւ բանտ գնալու։ Ես ալ անոր հետևեցայ։

Երբ բանտապահն ահագին փականքը դարձուց՝ Սէնէրի կանչ առաւ.

— Երթաք բարեաւ, Պ. վ.օկան, ըսաւ նա։ Եթէ ձեզի դէմ անկրաւ եղայ, կ'աղաչեմ ներէք ինձ։ Այլ ևս չպիտի տեսնուինք։

— Իմ մասիս՝ լիովին կ'ներեմ ձեզ։»

Սէնէրի պահ մը վարանեցաւ և ապա ձեռքն երկնցուց։ Նոյն պահուն դուռը բացին։ Կարող էի տեսնել խուժանին պժգալի վատթար դէմքերը — իր բանտակիցներուն դէմքերը։ Կարող էի լսել հեւտաքրքրութեան և զարմանքի խժդուժ ձայները. կարող էի առնել ժահարոյր հոտերն որ կ'ելնէին խաւարին քարայրէն՝ աղտոտ ու մրոտ կանիներով լի։ Եւ ահա այսպիսի վայր մը, այս-պիսի ընկերներու հետ բարեկիրթ, ուսումնական և նրբաճաշակ մարդ մը դատապարտուած էր իր վերջին օրերն անցնել։ Ահա-ռելի պատիժ մ'էր այս։

Եւ սակայն արժանի պատիժ մը։ Այս բանս զգացի երբ Սէ-նէրի կ'կենար բանտին սեմին վրայ իր ձեռքը կարկառած։ Այն մարդն անտարակոյս մարդասպան մ'էր։ Թէև իր ճակատագրին վրայ յուզուած էր սիրտս, բայց չէի կարող անոր ձեռքը սեղմել։ Իմ մերժումս թերևս չատ ծանր ու խիստ էր, բայց չէի կարող բռնել այդ ձեռքը։

Սէնէրի տեսաւ որ չեմ համապատասխաներ իր գործին։ Ա-մօթահար մնաց, գլուխը ծռեց և մկկի դարձաւ։ Զինուորը թե-ւէն բռնեց կոչտաբար և դռնէն ներս մղեց զինք։ Ապա Սէնէրի դէպ իմ կողմս դարձաւ և իր աչերը հանդիպեցան իմ աչերուս այնպիսի նայուածքով մ'որ չատ օրեր պիտ պաշարեց։ Այսպէս կ'նայէր ինձ երբ ամրակուռ դուռը գոցուեցաւ և ընդ միշտ ծածկեց զինք իմ տեսութենէս։

Եւ ես հեռացայ սրտաբեկ, թերևս ցաւելով որ նոր հար-ուած մ'աւելցուցի արդէն կրած ամօթոյն ու պատժին։ Փնտ-ռեցի իմ պաշտօնասէր բարեկամս, հարիւրապետն, որ պատուոյն վրայ խօսք տուաւ թէ արուեստիք ո և է դրամ դատապարտին ի նպաստ պիտի գործածուի։ Ուստի մեծ գումար մ'աւանդեցի

անոր, և գոնէ կարող եմ յուսալ որ մի մասն նպատակին պիտի հասնի։

Ապա գտայ իմ թարգմանս և հրաման տուի որ իսկոյն ձիերը պատրաստէ և փայտոնն դուրս հանէ։ Առանց վայրկեան մ'անցնելու կ'փափաքէի ճամբայ ելնել դէպ ի Անգլիա — հապա ինչին։

Կէս ժամու մէջ ամեն բան պատրաստ եղաւ։ Իվան և ես կառքը նստանք, կառապանը չարժեց մտրակն, ձիերն ընդ առաջ անցան, զանգակիկները զուարթագին հնչեցին և սկսանք յառաջանալ խաւարին մէջ, վերադարձ ուղևորութեան մը համար որ հազարաւոր մղոններ պիտի տևէր։ Միայն նոյն միջոցին էր, երբ կ'սկսէի ինքզինքս գտնել վերստին բնիկ երկիրս, որ նկատեցի թէ ինչ սոսկալի հեռաւորութիւն մը կ'գտնուէր իմ և սիրոյս մէջ։

Ձամբուն վրայ չրջան մ'ընելով՝ մի քին գնդանն աչքէս հեռացաւ, բայց մինչև որ բազմաթիւ մղոններ չկտրեցինք անկարելի եղաւ իմ մտքիս անդորրութիւնը գտնել. իսկ օրեր անցան մինչև որ կարող եղայ, գրեթէ ամեն վայրկեան, խորհելէ դադրիլ այն ահռելի տեղւոյն վրայ ուր գտած էի Սէնէրին, և ուր վերստին մտաւ երբ իմ գործս անոր հետ լմնցուցի։

Որովհետև ուղևորութեան գերք մը չէ այս, չպիտի նկարագրեմ բոլոր տեսածներս։ Օդը գրեթէ բոլոր ճամբորդութեանս ժամանակ նպաստաւոր էր, արահետները լաւ վիճակի մէջ։ Անհամբերութենէս գրեթէ գիշեր ցորեկ ճամբորդելու ըստիպուեցայ։ Դրամ չվնասեցի բնաւ. իմ արտասովոր անցագրիս չնորհիւ կարող էի միշտ ձիեր ճարել, մինչդեռ ուրիշ ուղևորներ կ'ստիպուէին սպասել — իսկ իմ առատաձեռնութիւնս թևեր կ'տար ձիերուն։ Երեսուն հինգ օրուան մէջ Նիժնի Նովկորօտ հասանք. Ռուսիա Պանդոկը քշեցինք մեր կառքն, յետին ծայր խարխլած վիճակի մէջ էր, այնպէս որ եթէ ուրիշ օթևան մ'ևս ունենայինք, հաւանօրէն իր գործն այս աշխարհիս մէջ պիտի լմնար։ Այդ կառքն իրրև պարգև տուի ուղեցոյցիս, որ, կարծեմ, անվիջապէս ծախեց զայն երեք ռուբլի։

Նիժնիէն չոգեկառքով ի Մոսկուա. ասոր ի նեղրզպուրկ։ Միայն քիչ մը ժամանակ անցուցի մայրաքաղաքն որպէս զի իմ յարգանքս մատուցանեմ Լորտ — և վերստին իմ չնորհակալիքս յայտնեմ իր աջակցութեան համար։ Ապա նոյն քաղաքը թողած գոչքս հաւաքելով՝ ճամբայ ելայ դէպ ի Անգլիա։

Երբ Իրքուղաքէն եղնելով կ'ուղևորէի ի Դօմաք նամակ մը գտայ Բրիսիլլիաէն գրուած, նոյնպէս Դօմօլօք, Բերմ և Նորագոյն հասած գրեր Բեդրզպուրկ առի։ Մինչև վերջին նամակին մէջ լուրերը գոհացուցիչ էին։ Բրիսիլլա իր աւանդն Տէվոնչիր տարեր էր։ Այդ երկրին մէջ մեծցած լինելով պատաւ կինն անոր կլիմայի յատկութեանց վրայ մեծ համարում ունէր։ Երկուքըն ալ, խնամակալուհին և Բօլին անդորրաւէտ այլ սիրուն գետափնեայ գիւղ մը կ'բնակէին հիւսիսային կողմը, և Բրիսիլլա կ'հաւաստէր թէ Բօլին «վարդի պէս կ'բացուէր և այնքան զգացում կ'երևէր որքան նոյն ինք Պ. Կիլպէթրդ։

Այս լաւ լուրերն ստանալէն ետև՝ զարմանք չէ որ մեծ կրեռանդս հասնիլ բնիկ երկիրս, ոչ միայն իմ կինս վերստին տեսնելու տենչանօք, այլ տեսնել զինք այնպէս զօր գեռ բնաւ տեսած չունէի, խելահաս։ Արդեօք պիտի յիշէ՞ր զիս։ ինչպէ՞ս զիրար պիտի դանէինք արդեօք։ Վերջապէս պիտի վարժէր զիս սիրելու։ Այս հարցումներուս պատասխանը պիտի ընդունէի միայն երբ Անգլիա հասնէի։

Եւ ահա հայրենիքն եմ։ Քանի՛ զմայլելի է դանուիլ հայրենակիցներու մէջ և միայն լսել չորս դին ընծիր, իմանալի անգլիարէն լեզու մը։ Հովէն ու արևէն երեսս այրեր կարմիր էր, մօրուքս բաւական երկնցեր։ Երբ Լոնտօն հասայ մի քանի ծանօթներ հազիւ ճանչցան զիս։ Այս կերպարանքով չէի կարող յուսալ որ Բօլինի մտաց մէջ յիշատակ մը գրգռեմ։

Ածելիի մը օգնութեամբ և նոր հագուստով չուտով իմ նախկին պատկերս քիչ շատ ստացայ, և ապա, նոյն իսկ Բրիսիլլայի չյայտնելով վերադարձս, դէպ ի արևմուտ գարկի՝ տեսնելու համար թէ ճակատագիրն ինչ ունէր ինձի համար։

Եւ միթէ մեծ բան մ'էր արշաւան մ'Անգլիոյ մէջ՝ երբ մարդ մ'ինձի պէս երկարատև ուղևորութենէ մը կ'դառնար։ Եւ սակայն այն ողբմելի հարիւր յիսուն մղոններն այնքան երկայն երևցան ինձ որքան հազար մղոնն ամիս մ'առաջ։ Վերջին մի քանի մղոնները կառքով ըրի, և թէև չորս չքեղ ձիեր մեզ կը տանէին, մէն մի մղոն Սիպերիական իշևանի չափ երկայն կը թուէր։ Բայց վերջապէս հասաւ ուղևորութեանս վախճանն և անտուկս թողլով կառատունն, ընդ առաջ անցայ, սրտաթունդ, Բօլինը տեսնելու։

Բրիսիլլաի նամակին մէջ նշանակուած հասցէին գացի։ Տունը հանդարտ փոքրիկ չէնք մ'էր՝ անտառուտ ափանց վրայ՝ հան-

գէպ ունենալով դար ի վար պարտէզ մը՝ լի ամառնային ցետին ծաղիկներով։ Դրան շուրջն այծեաերեւներ կ'սողոսկէին, իրենց ածուներէն արեւածաղիկներ վայրագաբար կ'նայէին և օդն անուշ հոտեր կ'բուրէր։ Երբ կ'սպասվի որ դուռը բանան՝ ժամանակ ունեցայ դիտելու այս հանգստաւէտ դիւղատունն և Բրիսիլլիայի ընարութիւնը գովելու։

Հարցուցի թէ արդեօք կարելի էր տեսնել Տիկին Տրիու։ Նէ տունը չէր — դուրս ելեր էր նորատի կնկան հետ քիչ մ'առաջ, և միայն երեկոյին պիտի դառնար։ Ըստի հեռացայ տունէն և գացի զանոնք փնտռելու։

Նոր սկսած էր աշունն, բայց տերևները թռչնելու նշան մը չէին ցոյց տար։ Ամեն ինչ կանանչագեղ էր ու թարմ։ Անամպ էր երկին և հոտաւէտ վարիկիկ օդ մը կ'հովահարէր երեսս։ Պահ մը կայ առի և չորս կողմն նայեցայ որոշելու համար բընակելիք ուղղութիւնս։ Իմ կեցած տեղէս բաւական հեռի կ'զատնուէր ձկնորսներու գիւղակն. իր տնակները խմբուած էին աղմկալի և ալեյոյզ գետակին բերանն՝ որ հովիտն ի վար կ'հոսէր և ծովը կ'ոստոսաէր զուարթագին։ Երկու կողմէն կ'երևէին աչտարակներ և ասոնց ետևն հեռուն անտառուտ բլուրներ, իսկ իմ առջև կ'տարածուէր լայնատարր հանգարտ կանաչ ծովը։ Այս տեսարանը բաւական զմայլելի էր, բայց հեռացայ անտի։ Ես Բօլինը կ'ուզէի։

Այնպէս կ'թուէր ինձ որ այսպիսի օր մը՝ հովանուտ պուրակներն և արագասահ առուակն անդիմադրելի հրապոյրներ ունին. ուստի քայլս ուղղեցի դէպ ի սեպաձև բլուրը և սկսայ քալել գետակին ի վեր, մինչդեռ պուարթագէմ առուակն կը անցնէր քովէս պարելով և իր կաւագոյն առատ ջրերն հազարաւոր փոքրիկ քարավազներ կ'յօրինէին բախելով ու փրփրալով իր անցքը արգելող սուուար ժայռերու բոլորակքը։

Շուրջ մլոն մը հեռացայ գետակին ուղղութեամբ — մերթ ցատկելով մամռալից ժայռերուէն վրայ, մերթ քալելով պտերներու մէջէն, մերթ ճամբայ բանալով կաղնիներու թփերու մէջ, ապա հանդիպակաց եղրը բացավայրի մը մէջ տեսայ օրիորդ մը որ կ'ուրուագրէր։ Իր կռնակն իմ կողմն դարձած էր, բայց այդ չնորհալի հասակին ամեն ձևերն այնքան լաւ կ'ճանչէի որ զգացի թէ նէ իմ կինս էր։

Եթէ նոր ապացոյցի մը կարօտ լինէի, բաւական էր նայիլ իր ընկերուհւոյն, որ իրեն մօտ նստած կարծես թէ գրուի

վրայ կ'մրափէր։ Մղձն մը հեռուէն կարող էր ճանչնալ Բրիսիլլաի շունն։ Նմանն երբեք չէ տեսնուած երիրիս վրայ։

Թէև ծանր էր ընելիքս՝ որոշեցի իմ ներկայութիւնս պաղտնի պահել։ Բօլինը տեսնելէ առաջ՝ փափաքս էր խօսիլ Բրիսիլլաի հետ և իմ ապագայ ընթացքս իր տալիք տեղեկութեան համեմատ բռնել։ Սակայն այս որոշմանս հակառակ՝ աւելի մօտենալու փարձութեան չկրցայ դիմանալ — իմ պանուած վայրէս չէի կարող տեսնել նէրա դէմքը — ուստի քիչ քիչ աւելի մօտ գացի մինչև որ ուրուագրողին գրեթէ դիմացը հասայ, և՝ հողակոյտ մը կիսովին ծածկուած՝ սկսայ դիտել Բօլինն անպատում խնդութեամբ։

Առողջութեան գոյնը կ'փայլէր իր այտերուն վրայ. իր մէն մի չարժման մէջ կ'երևէր կայտառութիւն, և երբ դառնալով քանի մը խօսք ըսաւ իր ընկերուհւոյն մի և նոյն բանը դիտեցի իր մի ակնարկին, իր ժպիտին մէջ, այնպէս որ սիրտս ուրախութեամբ կ'թրթռար։ Կինն որու կ'դառնայի տարբեր էակ մ'էր քան օրիորդն որու հետ ամուսնացայ։

Բօլին դարձուց գլուխն և գետակէն անդին նայեցաւ։ Խընդութենէս չկրնալով համբերել, իմ թաքչած տեղէս դուրս ելայ։ Գետակն մեր մէջն էր, բայց մեր աչերն իրարու հանդիպեցան։

Անշուշտ նէ կերպով մը յիշած է պիտ։ Եթէ երազի մէջ անդամ լինէր իմ դէմքս ընտանի պիտի երևէր իրեն։ Մտահան ուրուատեսրը վար թողուց և տեղէն ցատկեց Բրիսիլլաի զարմացման և գմայլման բացականչութիւնը լսելի լինելէ առաջ։ Նէ կ'նայէր ինձ ակնապիշ որպէս թէ կ'յուսար որ իրեն խօսիմ կամ մօտենամ, մինչդեռ պառաւ սպասուհին գալուստս կը ընդհատուրէր որոտալի գետակին միւս ափէն։

Եթէ քալուել ուզէի, այժմ չատ ուշ էր։ Անոց մը գտայ և մի քանի վայրկենէն ետք դիմացի եզերը հասայ։

Բօլին անշարժ մնաց, բայց Բրիսիլլա վազելով դիմաւորեց գիս և ձեռքս խանդաղելու չափ թոթուեց։

— Մինչ կ'յիշէ՞ նէ — մինչ գիս կ'ճանչէ՞ — փսփսացի, երբ ձեռքս քաշեցի և դէպ իմ կինս դիմեցի։

— Գեռևս ոչ. բայց պիտի յիշէ, ատոյգ եմ որ նէ պիտի յիշէ ձեզ, Պ. Կիլպերդ։»

Աղջիկը որ իր մարդարէութիւնն իրանար և Բօլինի մօտ գնալով ձեռքս երկնցուցի։ Առանց վարանելու բռնեց զայն, և

իր սև աչերն իմ վրայ դարձուց։ Ինչպէս համբերեցի և դինք սրտիս վրայ չսեղմեցի։

— Բօլին, միթէ կ'ճանչէ՞ք դիս։»

Նէ իր աչունքը վար առաւ։

— Բրիսիլլա խօսեցաւ ձեր վրայ։ Նէ կ'ըսէ թէ դուք բարեկամ՞ էք, թէ մինչև վերադարձդ պարտիմ գոհ լինիլ և հարցումներ չընել։

— Բայց միթէ չէ՞ք յիշեր դիս։ Այնպէս երևակայեցի որ հիմակ դիս ճանչցաք։

Նէ հառաչեց.

— Ա,յո՛, տեսայ ձեզ երաշներուս մէջ — տարօրէն երաշներ։»

Մինչդեռ կ'խօսէր չղուն կարմրութիւն մը գունաւորեց իր այտերը։

— Պատմեցէ՛ք ինձ ձեր երաշները, ըսի։

— Ձեմ կարող։ հիւանդ էի, երկար ժամանակ։ չատ հիւանդ էի։ Շատ բաներ մոռցայ — ամեն ինչ որ պատահեցաւ անկէտ եղաւ։

— Կ'ուզէ՞ք որ պատմեմ։

— Հիմակ չէ — ոչ հիմակ — դոչեց նէ եռանդագին։ Սպասեցէ՛ք, և թերևս ամեն բան միտքս վերադառնայ։»

Արդեօք նէ ճշմարտութեան նշոյլն ունէ՞ր։ Միթէ ակնարկած երաշներն նորածին յիշողութեանը պայքարներն էին։ Միթէ այն փայլուն մատանին զոր դեռ կ'կրէր իր մատն կ'թելադրէր իրեն անցած դարձած բաները։ Այո՛, պիտի սպասեմ և յուսամ։

Միասին վերադարձանք տուն՝ մինչդեռ Բրիսիլլա պատշաճ հեռաւորութեամբ կ'հետևէր մեզ։ Բօլին, ըստ երեւոյթին, իմ ընկերակցութիւնս կ'ընդունէր որպէս թէ չատ բնական բան մը լինէր։ Երբ ճամբան հետզհետէ կ'սեպանար և խորտ ու բորտ կ'դառնար իր ձեռքն երկնցնելով ինծ կ'փնտռէր, որպէս թէ այդ օգնութիւնն իր իրաւունքը լինէր։ Սակայն երկար ժամանակ ձայն չհանեց։

— Ուստի՞ եկաք — հարցուց նա վերջապէս։

— Երկար, չատ երկար ուղևորութենէ մ'որ հազարաւոր մղոններ տևեց։

— Ա,յո՛, երբ ձեր դէմքը կ'տեսնէի երազիս մէջ միշտ կ'ճամբորդէիք։ Միթէ գտաք ձեր փնտռածը, հարցուց նէ եռանդագին։

— Այո՛, գտայ ճչհարտութիւնը։ Այժեն բան դիտեմ։

— Ըսէ՛ք լինճ թէ ո՞ւր է նա։

— Ո՞վ ո՞ւր է։

— Անտոնի, իմ հարազատ եղբայրս — այն պատանին զոր սպաննեցին։ Ո՞ւր է իր գերեզմանը։

— Նա իր մօր մօտ թաղուած է։

— Փառք Աստուծոյ։ Պիտի կարող լինիմ անոր վրայ աղօթելու։ »

Նէ կ'լսէր թէև ղայրագին, այլ ղգայուն կերպով, բայց կ'զարմանայի որ բնաւ վրէժխնդրութեան տենչ մը չէր յայտներ մարդասպաններուն դէմ։

— Մի թէ փափաք ունի՞ք որ զանի սպաննողներէ վրէժ լուծուի։

— Վրէ՛ժ. ինչ օգուտ կրնայ բերել վրէժը։ Չէ կարող վերստին կեանք տալ անոր։ Շատ ժամանակ առաջ պատահած է այդ մահը։ Զգիտեմ թէ երբ էր. բայց այժմ կ'թուի ինձ տարիներ առաջ։ Թերևս Աստուած անոր վրէժը ցարդ լուծեց։

— Այո՛, մեծ մասամբ լուծուած է։ Մին մեռաւ բանտի մէջ մոլորեալ և խելացնոր. միւսն չղթայակապ կ'տառապի՝ ստրուկի պէս աշխատելով. երրորդը տակաւին իր պատիժը չգտաւ։

— Անշուշտ ուշ կամ կանուխ պիտի գայ այդ պատիժը։ Ո՞վ է այն։

— Մագարի։

Բօլին դող եկաւ այս անունը լսելով և նորէն չխօսեցաւ։ Տակաւին տուն չհասած, նէ ըսաւ մեղմիկ և ողբալի ձայնով.

— Պիտի տանիք զիս Իտալիա — իր գերեզմանին։ »

Խօսք տուի՝ շատ ուրախ լինելով որ ինչպէս բնազդով մ'այդ խնդիրն նախապէս ինձ կ'ուղղէր։ Նէ շատ աւելի բան կ'յիշէր քան ինչ որ հաւատացնել կ'ուզէր անշուշտ։

— Անդ պիտի երթամ, ըսաւ նէ, և պիտի տեսնեմ հանգչած տեղն, և այնուհետև անցելոյն վրայ չպիտի խօսինք։ »

Նոյն պահուն պարտիզին դուռը հասեր էինք։ Իր ձեռքն առի ձեռացս մէջ։

— Բօլին, ըսի, ջանացէ՛ք — ջանացէ՛ք դիս յիշելու։ »

Չին, մոլորագին ակնարկին ստուերն իր աչաց մէջ երևցաւ. իր միւս ձեռքն ճակտին վրայ դրաւ, և ապա, առանց բառ մ'ըսելու, հեռանալով տուն մտաւ։

(Շարունակելի)

ԳՈՀԱՐ

Գ.

Երկու չաբաթ անցեր էր վերոյիշեալ այցէն ի վեր։

Մի առաւօտ Տիկին Ձիւանեան տան մի տաքուկ սենեկին մէջ առանձին նստած՝ կ'կարէր։ Դուրսը՝ անձրեւն և հովը բուռն մարտ մի կ'մղէին իրարու դէմ, անձրեւն՝ յորդ և յամառ՝ կ'տեղար չարունակ և հովը կ'մարակէր զայն ուժգին, երկուքն ալ տեղի տալու հակամէտ չէին թուէր, մին կ'չառաչէր, միւսը կը սուլէր և որոտումն իր ահաւոր քրքիջներով կ'ծաղրէր այս մարտը վստահ ըլլալով որ երկու տարրերուն ալ ոյժը պիտի սպառէր վաղ կամ անագան և հանդարտութիւն պիտի տիրեր վերսին։

Փաղոցի տակաւաթիւ անցորդները բնութեան այս իրարանցումէ ահարեկ՝ կ'յիշէին ջրհեղեղը, ոմանք կ'հառոյէին տարերաց դէմ, այլք կ'փիլիսոփայէին բաղդատութիւններ ընելով արդի և Նոյի ժամանակակից մարդկութեանց միջև։

Իսկ Տիկին Ձիւանեան՝ թէև պատուհանին մօտ նստած՝ երբեմն դուրս կ'նայէր, այլ ոչ ջրհեղեղը կ'յիշէր, ոչ Նոյի տապանը, և ոչ ալ կ'տեսնէր խեղճ անցորդներն որք թրջած, ցեխատած, կ'մաքառէին իրենց անձրևնոցներու հետ, յուսահատ։

Իր երկան չապիկներու բրդած կոճակները կ'կարէր նէ, աշխատութիւն մ'որու մէջ փորձ էր յոյժ և զոր սովորաբար մի քանի վայրկեանի մէջ կ'աւարտէր, այլ այն առտու կոճակները չարունակ դետին գլորելու և անհետելու զարմանալի յամառութիւն մի ցոյց կ'տային, ասեղն ալ ստէպ կ'շեղէր, դերձանն ալ երբեմն կ'բզդէր, այնպէս որ Տիկին Ձիւանեան չարունակ դադար կ'առնէր, աչքերն գետին կ'յարէր, կ'խորհէր, կ'ժպտէր, ապա վերստին կ'աշխատէր։

Թերևս չատ մայրեր կրած են այն ուրախալի և միանգամայն տրտմալի յուզումը զոր Տիկին Ձիւանեան կ'կրէր նոյն պահուն, և պատճառն այս էր որ իր միակ զաւակը, իր սիրելի Գոհարը, կնութեան խնդրուած էր մի այնպիսի անձի կողմէ որուն նմանները մատի վրայ կ'համրուին և այս յուզուելու, հրմուելու և հպարտանալու թեթև պատճառ մի չէր.

Եւ կ'ապասէր որ Գոհար վար իջնէ, այլ նէ տակաւին ննջասրանը կ'գանուէր, կարծես ծուլութիւնը բռներ էր այն առտու։

— Արդեօք ամբողջ օրն անկողնին պիտի մնաս, Գոհար, կ'ըսէր մայրն իւրովի, ծուր մնացիր, աղջիկս, ժամը տասնմէկ կ'երթայ « — Սենեկին մէջ եղած ժամացոյցը առաս կ'նշանակէր — կէս օր մօտ ըսելէ, Գոհար, ու կ'նիրհես դեռ։ Ելիր ալ, բաւ է, եկու մորդ քովէ, ինչեր ունիմ քեզ ըսելիք, ինչեր հաղորդելիք Բայց, թող քնանայ քիչ մ'ևս, պի այսօր իր վերջին օրն է, այսօրէ ետև պիտի սկսի այլևս ուրիշի պատկանիլ, թող քիչ մ'ուեւլի երկար վայելէ իր ազատութիւնը։ Վայ, Գոհար, վայ, պիտի ծնէիր մեծնայիր, գեղեցիկ աղջիկ մը պիտի լինէիր և այնպիսի բարձր տեղ մը պիտի տեղաւորէի քեզ։ Զարմանալի է աչխարհս. տարիներն կ'սահին կ'երթան, փոքրները կ'մեծնան և մեծերը . . . կ'փոքր . . . այո, բնական օրէնքն է, ինչ օգուտ։ Խեղճ Գոհար, արդեօք տակիք լուրս ինչ ազդեցութիւն պիտ ընէ իր վրայ։ Պիտի հրճուի՞ թէ տրամի. այլ ինչո՞ւ տրամի, միթէ առկից աւելի ուրախառիթ լուրի մը կրնայ սպասել — աղջիկ մը։ Թերևս փոքր ինչ տարի իմանալով թէ իր ծնողքէ բաժնուելու ժամանակը մօտեցած է, բայց միթէ ամէն կնոջ բաժինը չէ՞ այս։

Այս տեսակ մտածումներու մէջ թաղուած էր Տիկին Ճիւանեան երբ դուռը բացուեցաւ ու Գոհար, թարմ և աչխոյժ, մտաւ ներս։

— Բարի լոյս, մայր, ուշացայ այս առտու։

— Բարի լոյս, Գոհարս, այո, ծոյլ աղջիկ, ուշացար, բայց երբ վաղն ամուսնանաս պարտականութիւններդ չպիտի ներեն այդ տեսակ ծուլութիւններու։

Գոհար ժպտեցաւ։

— Եկո՛ւ, եկու քեզ համբուրեմ։

Աղջիկը փոքր ինչ զարմացած մօտեցաւ իր մօր։

— Զայնդ, խօսքերդ այս առտու, մայր, չեմ հասկնար . . .

— Այո՛, Գոհարս, պիտի բացատրեմ, եկու։

Եւ Տիկին Ճիւանեան իր թևերը աղջկան պարանոցին չուրջը դնելով համբոյրներով ծածկեց անոր դէմքը։

— Ի՞նչ կայ, մայր, խօսէ. ինչո՞ւ աչքերդ լեցուեր են։

— Նատիր քովս ու մտիկ ըրէ։

Մայր ու աղջիկ քովէ քով նստան բազմոցին վրայ։ Մայրն աղջկան ձեռքը իրեններուն մէջ առած դորովագին կ'նայէր անոր քաղցր աչքերուն մէջ. մինչ աղջիկը կէս յուզուած, կէս մը-

տատանջ անախորժ լուրի մի նախազգացումն ունենալով իր մայրը կ'դիտէր ուշագիր։

Կ'արժէր այս երկու կիներու պատկերը տեսնել։

Յիսունի մօտ էր մին, յայր և միջահասակ, որու դէմքը՝ թէև թօշնած բաւական՝ այլ տակաւին կ'պահէր անհետացած գեղի մի տուներն. իր մեծ աչքերն, փոքր ինչ կարմ քիմը, լեցուն շուրթերն, և երեսի կանոնաւոր գիծերն կ'արտայայտէին պարզութիւն և անկեղծութիւնն, գիրութիւնն էր այլ կնոջ թերութիւնն որ մարմինը կ'կորէր և տձև երևոյթ մի կ'տար անոր։

Իսկ միւսը հիանալի արարած մ'էր. դեռ հազիւ քնանուշ կարուններ աեսած՝ Գոհար տիպար մ'էր կնային այնպիսի գեղութեան մ'որու վրայ հիանալ պարտք մ'է կարծես։ Հազուագիւտ են յոյժ այն կիներն որք գեղանի են և կ'անդիտեն զայն։ Գոհար կ'անդիտէր իր գեղը, գէթ այնպէս կ'երևէր, և այս էր իր մի մեծ հրապոյրը։ Եղէգի մի դիւրաթեքութիւնն ունէին իր բարձր հասակը և նուրբ իրանը. իսկ իր սպիտակ և փայլուն այտերն, սև և երազուն աչքերն, անբիծ ճակատը իր հոգւոյ անմեղութեան գրաւականներն էին, թեթև ժպիտ մի նէ տեսպ ունէր իր սիրուն շրթերուն վրայ, որոց գոյնն ծովէ նոր ելած բուստի ջերմիկ գոյնին կ'նմանէր։ Իր առատ մազերն գլխու կատարին վրայ հաւաքուած ընորհալի հանգոյց մի կ'կազմէին անդ։ Պարանոցէն մինչև ոտքերն քաշմիրէ երկար շրջազգեստ մի հագած էր որ տեղ տեղ թոյլ, տեղ տեղ և մանաւանդ մէջքէն վեր բաւական կ'սեղմէր մարմինն և աղօտ գաղափար մի կ'տար անոր ընորհալի գիծերու վրայ. շրջազգեստին մուխ գոյնն իր սև մազերուն հետ երևան կ'հանէր դէմքին և ձեռքերուն պայծառ սպիտակութիւնը։

— Խօսէ՛, մայր, նէ ըսաւ, անհամբեր, խօսէ՛։

— Աւելի աղեկ չէ՞ արդեօք առաջ նախաճաշես. ինչպէ՞ս կ'ուզես, Գոհար։

— Ի՛նչ աւելորդ հարցում, ո սիրելի մայր, մինչ պիտի կարենայիր լուռ մնալ մինչև որ դուստրդ նախաճաշն աւարտէր և մինչ դուստրդ պիտի կրնար նախաճաշն աւարտել մինչև որ լուրդ չիմանար։

— Գիտէի որ բաղդաւոր աղջիկ մ'ես, Գոհար, սկսաւ մայրն, կարծես սիրտս միշտ կ'ըսէր ինձ թէ օր մը լաւ տեղ մը հարս—

Գոհար այլայլեցաւ։

— Կ'յուզուիս, Գոհար, բնական է։ Ո՞ր աղջիկը չյուզուիր երբ առաջի անգամ կ'իմանայ թէ իր հայրին տունը առժամանակեայ վայր մ'է։ Շատ ազէկ կ'յիշեմ, երբ առաջին անգամ ըսին ինձ թէ հայրդ գիս ուզեր է և թէ անոր պիտի նշանուիմ, մանրեցայ ընկայ, ասկից ճիշտ քսանուվեց տարի առաջ և անկից ետև մէկ շաբաթ բան չէի կրնար ուտել, ըսել կ'ուզեմ բնական է այս յուզմունքը։ միթէ ծնողքները նուաղ կ'յուզուին, այս պահուս Աստուած գիտէ ինչ կ'զգամ, Գոհարս։ այլ փառք Ամենակարողին որ լաւ փեսացու մը գտանք քեզի, այնպիսի փեսացու մ'որմէ ամեն աղջիկ պիտի նախանձի, քանի քանի մայրեր գիտեմ որ խնամի ղրկած են անոր . . .

— Բայց ինչ կ'նշանակեն այս խօսքերը, հարցուց Գոհար, մտատանջ։

— Է՛հ, Գոհարս, բաղդաւոր աղջիկ ես, ես ալ բաղդաւոր մայր եմ. ամեն աղջկի ճակատին վրայ գրուած չէ ամուսնանալ այսօրուան օրս, ոչ ալ բարձր տեղերէ ուզուիլ։ Եւ գիտես ո՞րքան անտանելի է մայրի մը համար իր միակ աղջիկէն բաժնուելու զազափարը, սակայն կ'մխիթարուիմ մտածելով թէ աղէկ տեղ մը հարս պիտի տամ քեզ, դու, Գոհարս, Իզմիրի մեծ Տիկիններէ մին պիտի լինիս. հարուստ երիտասարդ մը ձեռքդ խնդրած է . . . ։

Գոհար իր ձեռքը արտին առաւ, իր արագ շնչառութիւնն, կուրծքին հապճէպ ելևէջը և թեթև գունատութիւն մի ցոյց կ'տային թէ որքան յուզուած էր, որքան ուժգին կ'տրտմէր իր սիրտը։

— Ո՞վ, նէ հարցուց հազիւ լսելի ձայնով մի։

— Պ. Սուրէնեանը, Իզմիրի հարուստ անձերէ մին, անձ մ'որ կրնայ քեզ տալ, ադամանդներ, փառաւոր տուներ, ամեն ինչ. որու հետ կրնաս աշխարհի չրջանն ընել, օր տեսնալ. այսպիսի մէկն է քեզ ուզողը, աղջիկս։ Թադոս աղան մինչդուսաւ հայրդ ձեռքդ խնդրեր է և հայրդ ալ հաւաներ է. անչուշտ ուրիշ ինչ կրնար ընել այսպիսի փայլուն առաջարկի մ'առջև։

Արդարև՝ փայլուն էր փեսացուն, ադամանդ, փառաւոր տուներ կրնար տալ, սակայն Տիկին Ճիւանեան, զովելի փափկանկատութեամբ մի զանց առաւ մի քանի մանը պարագայներ Գոհարի յայտնել։ Նէ չըսաւ թէ որքան կարճ ժամանակի մէջ լմնցեր էր այս գործը, թէ մինչ կալուածներու սակարկութիւնն մի ամիս, վեց ամիս և թերևս տարի մը կ'տևէ, այս գործողու-

Թիւնն աւելի սակարանի հանգամանք մ'ունեցեր էր քան թէ կալուածական. գի Թաղոս աղան, մի չաթաթ չարունակ լեզու Թափելէ ետև իրրև միջնորդ, Սեդրաք աղան մի վարկեանի մէջ հաւաներ էր հինգ հազար ոսկի տալ։ Ուստի փեսացուն մի վայրկեանի մէջ «գործեր էր» այդ կլոր գումարն։

— Բայց դեռ չըսիր թէ ո՞վ է, Թոթովեց Գոհար, մինչ իր փոքր ինչ դողդոջուն մատերն ջղոտ կերպով մի կ'խաղային իր չրջազգեստին կոճակներուն հետ։

— Կարծեմ ըսի, Պ. Սուրէնեանը, Գառնիկը . . .

Բայց, ո՛ պատրանք, Գոհար իր մայրին նման հրճուելու, ժպտելու և փառաւորուելու տեղ բոլորովին դունատեցաւ և արձանի պէս մնաց լուռ ու մունջ։

Իր կեանքին մէջ այդքան բուռն ներքին պայքար մի չեր ըզգացած։

Եւ անձայն իրար երես նայեցան պահ մի՝ մայր ու աղջիկ։

— Ի՞նչ եղար, Գոհարս, ըսաւ վերջապէս առաջինը, բայց կ'երևակայեմ զգացումներդ. անշուշտ սիրտդ այնքան ուրախութեամբ լեցուեցաւ որ չես կրնար խօսիլ. քիչ մը հանդարտ մնացիր և ամեն ինչ կ'անցնի։

Անցան մի քանի րոպէներ, այլ ինչ րոպէներ էին անոնք Գոհարի համար, և այդ րոպէներու հետ ինչ խոհեր ալ անցան անոր մտքէն։ Եւ այդ քսանամեայ անփորձ կոյսը կարծես քառասնամեայ փորձառու կնոջ մի կ'փոխուէր այդ մի քանի րոպէներու մէջ։ Ինչո՞ւ կ'ուզէին դինքն ամուսնացնել, ինք չէր ուզեր ամուսնանալ, կամ՝ եթէ կ'ուզեր, պէտք չէ՞ր որ փեսացուն իր հաւնած անձը լինի. Յարուստ մ'իր ձեռքն ուզեր էր իր հայրէն, հայրն ալ խոստացեր էր զայն, հապա ինք որ ձեռքին տէրն էր, հապա ինք որ այդ ձեռքին հետ պարտաւոր էր սիրան ալ տալ. միթէ իր հաւանութեան պէտք չկա՞ր, ինչ էր ուրեմն ինքը. քար մի, հիւլէ մի, թէ դրօ։

— Մայր, հեկեկաց Գոհար ճիգով մի։

— Գոհա՛ր,

— Պ. Սուրէնեան դիս կ'պատուէ՛. այլ, այլ, չեմ ուզեր . . . այդ պատիւը։

— Ի՞նչ ըսիր, Գոհարս։

Կ'երևի թէ Տիկին Ճիւանեան կամ չլսեց կամ չհասկցաւ իր դուստրին պատասխանը։

— Ի՞նչպէս, աղջիկս, նէ կրկնեց։

— Գոհար փոքր առ փոքր կ'հանդարտէր և համարձակու-
թիւն կ'առնէր։

— Չեմ ուզեր Պ. Սուրէնեանը, ըսաւ։

Տիկին Ձիւանեանի դէմքն թերեւսաւատ և ապուշ արտայայ-
տութիւն մի առաւ։ Չէր կրնար իր ըսածին հաւատալ։ Իր սըր-
տին ջերմ ուրախութեան մէջ սառի բեկորի մի նման կ'ընկնէր
Գոհարի կարուկ պատասխանն։ Արդեօք, իրաւ, «չեմ ուզեր
դինքը,» ըսած էր Գոհար։ Այլ տարակոյսի տեղի չմնաց դի նէ
կրկնեց։

— Պատասխանս կ'զարմացնէ քեզ, մայր, այլ, ներէ՛, չեմ
ուզեր դինքը։

Չէր ուզեր դինքը, բացայայտ էր, չէր ուզեր դինքը, Գոհարի
խեղճը գլուխն էր արդեօք, այսպիսի փեսացու մի չուզել, բայց
ամեն ոք պիտի ծիծաղէր, բնչ յաւակնութիւն, Պ. Սուրէնեանը
մերժել, ով կ'յուսար առնել ուրեմն Գոհար։

— Ինչպէս, Գոհար, չես ուզեր դինքը, ըսաւ իր մայրն. չու-
թերդ կ'խօսին մեզի թէ այդպէս կ'մտածես. չատ ամաչարե-
կիր պատասխանելու։ Գիտես ով է քեզ ուզողը, Պ. Գառնիկ
Սուրէնեանն է, Գոհար, իմացար, Գառնիկ Սուրէնեանն է։

— Գիտեմ, գիտեմ, բայց ես չպիտի ամուսնանամ։ Չեմ
ուզեր դինքը։

— Չպիտի ամուսնանամ։ Գոհարս, ինչեր կ'ըսես այս առ-
տու. աղջիկս ուրիշ անգամ ուշ մի արթննար, մինչ նայէ որ
ժամը եօթուկէսին ոտքի վրայ լինիս ամեն առտու։ Չափէ ա-
ւելի քունն ալ ախտ չէ, ուզեղը կ'թմրեցնէ և մարդ
ըսածը չդիտեր։ Ձմեռրիա կ'ըսեմ, Գոհար, եօթ տարեկան աղջիկի
մի պէս կ'խօսիս այսօր։ Ըսէ՛ տեսնեմ, ինչ է պատճառն որ
Գառնիկը չես ուզեր։

— Պատճառն այս է որ դինքը չեմ ուզեր. ձայն մ'ինձ կ'ըսէ
թէ երջանիկ չպիտի կարենամ լինիլ անոր հետ. սիրած անձս
չէ, անցեալ գիշեր կ'փափաքէի որ ամենևին եկած չըլլար հոս,
այնքան անախորժ երևեցաւ ինձ իր ներկայութիւնն։ Ո՛չ, ո՛չ,
չեմ ուզեր դինքը և կ'աղաչեմ մի տիպեր գիս։

— Գոհար, չես գիտեր ինչքո վրայ կ'խօսիս և կ'մոռնաս ալ
որ հայրդ խօսք տուած է։

— Կ'ցաւիմ այսպէս ըլլալուն, բայց հայրս ալ պէտք չէ՞ր որ
անգամ մ'ալ ինձ հարցնէր։ Ուրիշ է եթէ իմ ազատիլ կ'ուզէի, արդեօք ծանրութիւն մ'եմ տան մէջ . . .

— Գոհարս, սիրելի աղջիկս, ինչպէ՞ս կրնաս այդպէս խօսիլ, ինձ մարիկ ըրէ, մի՛ ամաչպարեր խօսելու ատենդ։ Գառնիկը լաւ չես ճանչեր դեռ, պիտի տեսնես որ ինչպէս պինքը պիտի սիրես մի քանի անգամ անոր հետ տեսնուելդ ետև, այնքան պիտի յարիս անոր որ պիտի ուզես միշտ մօտդ ունենալ դինքը և առանձին եղած ժամանակդ տաղտուկ պիտի չզգաս։

— Երբէ՛ք, երբէ՛ք, երբէ՛ք, ես երջանիկ եմ հայրիս տունին մէջ, չեմ ուզեր ամուսնանալ, չեմ ուզեր Պ. Սուրէնեանը, չեմ ուզեր, չեմ ուզեր, մի ստիպէք դիս։

— Այժեն մարդ վրադ պիտի խնդայ, ասկից զատ մի՛ մոռնար որ հայրդ խօսք տուած է, և, դիտես ինչ ըսել կ՛ուզեմ, կ՛ճանչնաս հայրդ, այնպէս չէ՞։

Իզուր Տիկին Ճիւանեան աշխատեցաւ իր դուստրն համոզելու, ի զուր ժամերով լեզու թափեց. Գոհար հաստատ էր իր որոշման մէջ։

— Ափսոս, հառաչեց Տիկին Ճիւանեան երբ առանձին մնաց, Պ. Սուրէնեանի նման մէկը մերժել լուսած բան է, և ինչ պիտի ոսկ ամուսինս, ինչպէ՞ս խօսիմ իրեն, Տէր Աստուած օգնէ ինձ. Գոհար ինչ բերիր գլխուս, ենթադրենք որ ես ձայն չհանեմ բայց հայրդ, հայրդ . . .

Իրաւունք ունէր Տիկին Ճիւանեան պի երբ՝ երեկոյեան Գոհարի մերժումն իմացուց իր ամուսնոյն, հետևեալ պատասխանն առաւ։

— Ըսէ իրեն, Աննա, թէ պէտք է որ առնէ Գառնիկը։ Ես խօսք տուած եմ և այդ խօսքը ետ չեմ առներ, ասկից զատ տուած խօսքս աղջկանս օգուտին համար ըլլալուն կատարելապէս համոզուած եմ։ Ես թուքս լղող մարդ չեմ։ Ես քառասուն տարի վաճառականութեան մէջ գանուած եմ և խօսքս խօսք եղած է։ Ուստի ութ օր սպասենք և եթէ չվոխուի Գոհար այն ժամանակ ես կ՛խօսիմ իրեն հետ։

Ինչ անձկալի օրեր էին այդ ութ օրերն, Գոհարի համար, մէն մի օրն կարծես ժպիտ մի կ՛առնէր կ՛տանէր անոր դէմքէն։ Ականերև էր իր սրտին մէջ մղուած բուռն պայքարն և ամեն օր աւելի ևս կ՛արհամարհէր այն անձը որ կ՛ուզէր պինքն այսպէս կորզել, նէ կ՛սրդողէր ու կ՛բարկանար բոլոր իր մօտաւոր և հեռաւոր ազգականներու դէմ որք ամեն օր կ՛զային պինք համոզելու. ինք անյողդողդ կ՛մնար, որոշած էր իր բոլոր զօրութեամբ հակառակիլ այս խնամութեան, այլ իր արիութիւնն կ՛մարէր,

իր որոշումը կ'ասասնէր ամեն անգամ որ կ'տեսնէր իր հայրին հանդարտ դէմքն, անոր կամք յայտնող ամուր բերանը. կ'տկասրանար, կ'ղդար թէ պիտի ընկճէր իր հօր կամաց առջև. և իր հոգին կ'տառապէր վարանումներու, յոյսի, բարկութեան և վհատութեան յոգնեցուցիչ քաոսի մի մէջ։

— Սեդրաք, ըսաւ Տիկին Ճիւանեան ութերորդ օրն, կ'վախնամ որ Գոհարի առողջութիւնը չվտանգի. օր օրի կ'նիհարնայ. ակներև է թէ Գառնիկն հաճելի չէ իրեն. եթէ ինձ կ'հարցնես չտիպենք պինքը, Սեդրաք։

Չեզնալի ժպիտ մ'անցաւ Պ. Ճիւանեանի երեսէն.

— Ես քեզ չեմ հարցներ, Աննա, և կ'ցաւիմ բոլոր այն տրամածներուն վրայ որք ինքզինքնին այր կ'կոչեն և կիներու խորհուրդ կ'հարցնեն, զի դուք ոչ սկզբունք ունիք, ոչ ալ կարծիք. ինչ որ կ'գովէք այսօր, վաղը կ'այպանիք, ինչ որ տգեղ է այսօր ձեզ համար, վաղը գեղեցիկ. առտու ըսածնիդ, կէսօրին կ'մոռնաք։

Աննա գլուխն օրեց մելամաղձիկ կերպով մ'որ թերևս ըսել կ'ուզէր, « կրնաս իրաւունք ունենալ, բարեկամ, այլ այդ խոսքերուն ինչ հարկ կայ այժմ, ինչ օգուտ ունին։ »

— Կ'հասկնամ, Աննա, չարունակեց իր ամուսինն, ձեր սեռն հոդմաշարժ աղօրի մ'է. հոմն ուսկից որ փչէ այն կողմը կ'դառնաք. ես և ոչ մէկէ խրատ չեմ սպասեր։ Ես դիտեմ ըրածս։ Գոհարի բերանին չընկեր է Սուրէնեանի նման մարդու մը չհաւնիլ։ Ասկից դատ — լաւ մտի'ր ըրէ', Աննա — ասկից դատ Գոհար որ այսօր այնքան տղայարար կ'մերժէ Սուրէնեանը վաղը թերևս պինքը վիայն պիտի ուզէ։ Այսպէս չինուած են կիներն, քմահաճոյքի զաւակներ են կիներն։

— Է'հ, չատ ազէկ, իրաւունք ունիս, ըսաւ Աննա, բայց ոչ ես և ոչ ուրիշներ չկրցանք Գոհարն համոզել, եթէ կ'ուզես դու խոսք հետը, այլ իմ կարծիքովս . . .

— Կեցիր, գոչեց Պ. Ճիւանեան, կարծիքդ ուրիշ անգամ։ Եթէ տղաք և աղջկունք իրենց օգուտը ճանչնալու և դատելու կարող ըլլային այն ժամանակ ինչ հարկ կար որ Աստուած հայրեր ու մայրեր սահմաններ անոնց վրայ հսկելու համար։ Մինչ ես չգիտեմ որ Գոհար երջանիկ պիտի լինի թէ ոչ Սուրէնեանի հետ։ Եթէ այս միութիւնն իր օգտին, իր երջանկութեան համար չըլլար միթէ կ'հաւանէի՞։ Ես գիտեմ ըրածս, Աննա, և որոշումս որոշում է. Գառնիկ Սուրէնեանի խոստացայ Գոհարի ձեռքը, Գառնիկ Սուրէնեանի պիտի տամ Գոհարի ձեռքը։

Հաստատ, հանդարտ ձայնով մի կ'խօսէր Պ. Ճիւանեան իր բառերն չափելով և հատիկ հատիկ դուրս տալով զանոնք մարդու մը պէս որ իր խելքին և կարողութեան գիտակցութիւնն ունի։

— Ո՞ւր է Գ,ոհար, հարցուց նա պահէ մ'առ, իր սենեակը, լաւ կ'երթամ տեսնուիլ իրեն հետ և փորձով ցոյց պիտի տամ թէ քսան կին մի այր չարժեր։ Մէկ չարաթէ ի վեր դու, քոյրերդ, իմ քոյրս, Գոհարի մի քանի բարեկամուհիներն չկրցան դինքն համոզել, լաւ, արդ ես կ'երթամ։

Այո՛, իր սենեակն էր Գոհար. իր ձգնարանն եղած էր այն, ուն իր հոգւոյն դառնութիւնը ազատութիւն կ'գանէր։ Նստած էր սեղանի մ'առջև, որու վրայ վառ մամ մի կար, բայց գիրք մի կ'հանդչէր իր ծունկերու վրայ, այլ նէ չէր կարդալ, թէև կ'փորձէր։ երբ միտքը տոգորուած է անձնական դժբաղդութեամբ մի, երբ բարոյական կսկիծ մի կ'կրծէ ուղեղը, ինչպէս կարելի է սդդ մտքին և ուղեկին ուրիշ զբաղում մի տալ։

Նէ կ'խորհէր, տարտամ յոգնաբեկ նայուածք մի տածելով աստ և անդ, երբ իր հայրին ձայնը լսեց, ոտք ելաւ թմբիրէ մը սթափածի պէս և դուռը բացաւ։

Պ. Ճիւանեան յամրօրէն ներս մտաւ և նստաւ. Գոհար ոտքի վրայ մնաց անոր դիմաց, ցուրտ մի կ'զդար իր սրտին մէջ. կ'զուչակէր թէ ինչ նիւթի վրայ խօսելու համար եկած էր նա, անակնկալ չէր այս տեսութիւնն իրեն համար, գիտէր որ օր մ'ալ վերջապէս իր հայրին բացատրութիւններ տալու պիտի ստիպուէր և թէպէտ առաջուց պատրաստած էր իր ըսելիքը, իր պատճառներն, այլ չիմթեցաւ, ամեն ինչ մոռցաւ երբ անոր փոքր ինչ խիստ աչքերն իր վրայ յարեցան։

— Գոհար, ըսաւ իր հայրն մեղմօրէն, անչուշտ կ'հասկնաս ինչու սենեակդ եկայ։ Ի՞նչ է պատճառն որ կ'մերժես Սուրէն-եանի հետ նշանուիլ։

— Որովհետև . . . հայր . . .

— Խօսէ՛, խօսէ՛։

— Գանի որ այդ համարձակութիւնը կ'տաս ինձ, կ'խօսիմ, ինչպէս արդէն ուրիշներու ալ ըսի, վինքը չեմ ուզեր որովհետև . . . որովհետև . . . ինչպէ՞ս ըսեմ . . . չսիրած անձս է . . .

— Բաւական առաջ գացեր ես, Գոհար, չսիրած անձդ է հէ, և արդեօք կա՞յ մէկը որ կ'սիրես, հարցուց Ճիւանեան արհամարհոտ ժպիտով մի,

— Ո՛չ։

— Լաւ ուրեմն առանց Գառնիկը ճանչնալու ուսկից գիտես թէ պինքը պիտի սիրես թէ ոչ։

— Եւառանց պինքը ճանչնալու ինչպէս . . . պինքն . . . առնեմ։

— Հայրիդ հետ այդպէս խօսելու իրաւունք չունիս, Գոհար։ Մինչ հայր մ'իր զաւկին բարիքը չուզէր։ Ինչ ծիծաղելի յամառութիւն է այդ։ Այլ որքան որ սպասեցի բաւ է, գիտցիր որ պիտի առնես Գառնիկը։

— Բայց . . .

— Եթէ կ'ուզես որ քեզ սիրեմ առաջուան պէս, եթէ կ'ուզես որ վրադ ունեցած համարումս չկորսնցնեմ, եթէ կ'փափաքիս որ աչքէս չիյնաս . . .

— Կ'բաւէ՛, կ'բաւէ՛, կ'բաւէ՛, մրմնջեց Գոհար արտասուաթոր։

— Ուրեմն, պիտի առնե՞ս պինքը։

— Աստուած իմ, հեկեկաց Գոհար։

— Այո՛, կամ ոչ, խօսէ՛ — և Պ. Ճիւանեան ոտք ելաւ — որքան որ չունէ թափել տուիր ինձ բաւ է, գիտցիր որ Գառնիկ Սուբէնեան ամուսինդ պիտի լինի։

Բողբոջ, աղերս, ամեն ինչ պարապ էր։ Գոհար զղայ թէ տեղի տալէ ուրիշ ճար չկար։ Եւ կ'մտածէր — կարծես իր ժրաղդութեան վճիռն քիչ մ'աւելի ուշ արձակելու համար։

Յանկարծ իր դէմքը փայլեցաւ. աչքերը վառեցան մի երկվայրկեան. քիչ մ'ևս մտածեց և ձիդով մի՝

— Քանի որ այս է կամքդ, նէ ըսաւ, պարտիմ հպատակիլ։

Պ. Ճիւանեան համբուրեց իր դուստրին ճակատը և դուրս ելաւ սենեկէն։

(Շարունակելի)

ՄԻՀՐԱՆ ՎԱՐԴԵՏԵԱՆ

ՀԷԳ ԾԱՂԻԿՆ

Ծաղիկ մ'էի նորաբաց
Ի մի ծղօտ գոլ դալար,
Սիւրին ողջոյն գգուանաց
Մէջ բառերի ես վառ վառ։

Երկին էր ինձ միշտ ժպտուն
Իւր կապուտով ջինջ պայծառ,
Եւ գիշերն ալ համբուրն
Լուսովր լցնոյր բաժակս յար։

Լուսապայծառ առաւօտ
Ոևևի՛ր վասն իմ իւր նեկտար
Եւ իմ բաժակ անաղօտ
Ըմպէր զայդ ցօղ կենարար:

Ակակակիտ մի առուակ
Որ կը սահեր իմ քովեն
Ոևևի՛ր մրմունջ սիրավանգ
Որ աղօթ մ՚էր զոգ առ Էն:

Եւ Փիլոմել օրն ի բուն
Ներբողեր գիս երգերով
Իսկ գիշերայն նա գիմ քուն
Օրօրեր միշտ գորովով . . . :

Տիրեց սակայն արդ խաւար
Սիւք դադրեցաւ փչելէ
Եթերն առիս սիրավառ
Դադրեցաւ, ա՛ն, ժպտելէ.:

Իմ առուակն ալ մոռցաւ վաղ
Իւր սիրելին խանդակաթ
Եւ արշալոյսն այլ նուազ
Խնայեց ինձ ցօղին կաթ:

Եւ զնաց ա՛ն հապճեպով
Փիլոմելեայ քոյր չքնաղ
Իւր երգոց գիս զրկելով
Ի վիշտ բողոքով գիս աւա՛դ . . . :

Եւ նուսկ յետոյ ցրտաշունչ
Ֆամին բաժնեց անխնայ
Ձիս ծղօտին ս՚անտերունչ
Ոտի՛ց կոխան ես եղայ . . . :

ԱՂԵՔՍԱՆԴՐ

ԱՒ ՔՈՅՐՆ ՎԱՂՈՒՄԵՒԻ

Վա՛ն, ո՛ քոյր իմ, մանաքրաւի՛ր այն կուսանք
Որք կը կոչին պարկայք–մանուկ սեւ գուսանք,
Քե՞զ ալ տարին զոհել իւրեանց մկրատին
Ցայն մրին վրա ուր սիրելիք այլք նանգչին . . . :

Ա՛ն, ի՛նչ դառն է այս նարուած, ի՛նչ անեղ.
Որոյ ներքեւ փշրին շնորնք ու քուն գեղ,
Ի՛նչ, դո՞ւ, յայդ տիս, ո՛ պաշտելի իմ նոգեակ,
Կ՚երթաս այսքան վաղ նանգչիլ ցուրտ վիմին տակ . . . :

Բայց ի՞ր բօքուիլ կենացդդ լոյծ ոսկերել
Զոր վարդ բոյրով, արփին լուսով էր պճնել,
Ո՞ն է՞ր անփոյթ արհամարնել այն գարդեր
Զորս երկին քեզ նամար էր պատրաստեր:

Եւ ի՛նչ բաղցր, հոգեզբրաւ է՛ր քո ձայն,
Չի՛ սրտալիր կ՛երգի՛ր, քո՛յր աննման,
Եւ ի՛նչ վայրկեանք երջանկութեան գերագոյն
Նուիրեի՛ր դու ինձ, դու վեհ սիրոյ բոյն:

Միթէ անդարձ յափշտակե՞ս, ո՛ Աստուած
Անմեղ հոգեակն այս գարդ երկակ լոկ գարնանց
Միթէ . . . ճախանձ, հեռ քեզ չարժեց խլել զայն
Որ խինդ ու փառք եւ հրճուանք էր իմ համայն:

Է՞ր այսքան վաղ կոչել առ քել ասա Տէ՛ր,
Այն ձեռակերտ որ էր յերկնուստ մի նուէր.
Միթէ ժպի՞տ մ'էր այացեալ քո դէմքին,
Որ փայլելէ յետոյ դարձաւ քեզ անդրէն . . . :

Ա. ՕՐ· Ա· Վ·

Դու զգայնիկ նորարաց
Ինչպէ՞ս չուտով ճանչեցիր . . .
Թէ չէ՛ր բոլջիկ բեւաբաց
Այլ՝ ո՛ր ի քեզ սաւառնիր . . . :

Քո բշերը վարդ հագած.
Իսկ շրթներդ բաց մեխակ,
Աչիկներդ ամօրխած,
Կարծես լինին զոյգ փայլակ . . . :

Ճկուն իրան սիրաբոյր,
Որպէս սօսի անտառիս
Հիւսկենճներդ բխաբոյր
Այգուն ի նով տատանիս:

Այդ բափանցիկ մարմնի մէջ
Ո՛հ, վառուռամէ մի վեհ հուր,
Կամ հրեշտակաց էլ եւ ջջ
Դու ես միայն սուրբ, մաքուր . . . :

Ահա՛ սըրտիդ հայելին
Գլխիդ վերեւ կախուել է,
Այս ամարաւո վեհ երկին
Հոգւոյդ խորքը գծուել է:

Մարմնի, հոգւոյ բարձր գեղ
Պարգեւողին քեզ մատաղ,
Ինձ որոնել ամեն տեղ
Վիճակեցաւ քեզ, աւա՛դ . . . :

Լռեց սոխակն ի բիլին
Իւր դայլայլիկ երկնաձամ . . .
Վարդ եւ յասմիկ նոյ հակին
Ոտներիդ տակ յարաժամ:

Տե՛ս, պատկառեց արշալոյս,
Մարմանդի մէջ է բազջում,
Արուսեակը վաղախոյս
Անկեալ ի մուտ է փախչում . . . :

Բայց սիրելիդ համարձակ
Աչքերիդ մէջն է նայում
«Ո՛հ . . . Մարդուհի՛, իմ հոգեակ . . . »
Հեկեկալով մրմնջում . . . :

Այո՛, պաշտումես նորաճ,
Բա՛յց . . . բաժնելէ ձեզ մի բաղդ·
Դուն յօտարին հարսնարաճ,
Նա սիրահար մի ամբաղդ . . . :

կարիճ

Վ· Գ· ՄԱՏՈՅԵԱՆ

ՕՐԻՈՐԴ ՔԼԻՕ ՔՕՑՕՐՈՒԼՕՑԻ

ԴԱԴԱՂԻՆ ԱՒՋԵԻ*

Ա.

Քու մայրն յղեց զիս, առջիդ ծնրադրել
Ըսել երկու խօսք և քեզ աղաչել,
Որ զինքն Թողոյ որոշումդ փոխես.
Չի իր ծերութեան միակ նեցուկն ես։
Որ Թողուս զանդարձ ուղին մշանջեան,
զի դու էիր խինդ, զարկն իր այրութեան.
Քլիօ, մինչ օժիտ քեզ տայր քու մայրիկ,
Ո՛չ, քու ցուրտ պատանքն համբուրէ այժմիկ։

Բ.

Ըսաւ, ներէս, եթէ յանցանք մ՚ունի յորմէ ես ցաւած,
Եւ ի տուն քո վերադառնաս իսկոյն Թեւեր քու բացած.
Չի հարսանեաց այդ զգեստով կառարի քու հարսնութիւն,
Եւ բարեկամք և քու մայրիկ վայելեն անդ ցնծութիւն։
Ըսաւ նաև Թէ պատրաստ է Թափել արիւն իւր համակ,
Որ կարմրափայլ բուստն փոխուած քեզ զարդարէ բովանդակ.
Ըսաւ Թէ քեզ համար այնքան Թափած արտասուքներ,
Ականակիւռ ոսկորի փոխուած վերըմբռնեն քու մազեր։
Ըսաւ Թէ իւր աչերն անգամ կորուսանել պատրաստ է,
Թէ կարենայ զքեզ դնել և ազատել մահուանէ.

* Անցեալ ամիս քաղաքիս Այի Ֆօթինի Մայր Նկեղեցւոյ մէջ վաղամեռիկ Քլիօ Քօյօրուլօս դեռատի օրիորդին յուղարկաւորութեան հանդեսը կատարուեցաւ, որուն դագաղին առջև խուռն բազմութիւն ժողովրդեան արտասուալից աչօք մնիկ կ՚ընէին դամբանական քերթուածը, զոր կարդաց Յունաց Մուսեոնի և Թանգարանի տեսուչ Մեծ. Սթիլբօն Քիթաքիս ուսումնական երիտասարդը։

Մեծ. Պետրոս Խ. Թերզեան, որ ներկայ էր այս տխուր և արտայայտիչ հանդիսին, արժան դատած է իր վարժ գրչով յիշեալ խմաստալից և սրտաշարժ դամբանականին ճշդիւտ և բնահիւս Թարգմանութիւնն ընել և խմբագրութեանս ուղարկել ի հրատարակութիւն։ Ն. Խ.

Յիրաւի կայր պիտի միայ, այլ կրնայ դեռ տեսնել քեզ,
Զի և ոչ մի ծածկոյթ ունին հոգւոյ աչերն աղէկէզ։
Ըսէ՛, դեռ այլ ինչ կը բաղձաս, ըսե՛ս, զոհէ ամեն բան,
Օ՛ն բարբառէ, և թող քու այդ քաղցրախօսիկ հեչտ բերան։

Գ.

Ահա խօսի, բանայ չրթունքն, ունկնդրեցէ՛ք համրէն,
Տա՛ր, Տէր իմ, որ իւր միտք փոխէ և չմեկնի այս տեղէն.
Արդ՝ լսեցէ՛ք, դի յաչխարհէս չէ իւր այս ձայնն անվհեր,
Զոր լսելով ես կը սոսկամ և չլանան իմ աչեր։

Դ.

Իմ մօրն լսէ՛ք, որ դաղարի իւր լացէն,
Զի կաւք Տեառն է որ կ՛բաժնէ մեզ այժմէն.
Նորին կամաւ տեսանենք կրկին մենք դիրար,
Ի հանդերձեալ կեանս անբաժան, ուր կամք չար։
Անդ ամեն ինչ է սուրբ, անբիծ և անմեղ,
Անդ են հրճուանք, բերկրանք և լոյս երկնազեղ.
Իմ մօրս տա՛ր այս ոսկեթելն յիշատակ
Զոր պարգևեց, վերջին համբոյրս տա՛ր միակ։

Ե.

Ահա դադրի նա խօսելէ, հարկ է իւր իղձ կատարել,
Հարկ է մօր քով ի յիշատակ* տալ հարսնուքեանն ոսկեթել,
Արդ՝ թողուցէ՛ք այս սիրասուն տարաբաղդ և հէք աղջիկ
Որ իւր անբիծ և սպիտակ թևեր բացած հանդարտիկ,
Վերասլանայ դէպ երկնաւոր նուրբ անջրպետն անհուն
Ուր իւր անբիծ և սպիտակ թևեր բացած հանդարտիկ։

Հեղինակ
ՍԹԻԼԲՕՆ ԲԻԹԱՔԻՍ

Թարգմանեց
Պ. Խ. ԹԻՐԱԶԵԱՆ

Տէսուչ Ցոյն Մասեանց և Գրատան

* Փերթողը սոյն բառերը արտասանելու ատեն դադարին մատնանշով փունջ մի ոսկեթել կը բերուներ սրտաճմլիկ և զգածուած ժողովրդին առջև։

ՍՏԱԽՕՄՈՒԹԻՒՆՆ

ԻՐԵՒ ԳՆՂԱՐՈՒԱԾՍ

*Անցեալներն այս վերնագրով յօդուած մ՚ուշադրութիւնս դրաւեց և ըսի ինքնիր։ — Է՛հ, ինչ զարմանալի աշխարհի մը մէջ կ՚ապրինք։ Մինչդեռ մեկ կողմէ մեծ իմաստասէրներ, աշնուամիտ բարոյագէտներ, մարդասէր դաստիարակներ կ՚գոչեն չարութենակ, պետք է ըսեն ու ճշմարտութիւնը ծաւալել ընկերութեան յետնագոյն խաւերուն մէջ անգամ, որպէս զի մարդս ֆիզիքական աշխարհի գաղտնեաց և բարոյական պարտաւորութեանց գիտակցութեամբն օրէ օր ազնուանայ և բարձրանայ, միւս կողմէ ընկերութիւնն՝ նկատելով իբրև տեսական անպէտ սկզբունքներ դիտութեան և լուսաւորութեան տուած դասերն, կ՚խորասուզուի, մինչև անգամ եւրոպական աշխարհին մէջ, յանուն մարդավարական կենցաղավարութեան, այնպիսի հին ու նոր սոուիթեանց մէջ որ մարդկային կատարելութեան տեսութեան վրայ կասկածներ կ՚գրգռէ։ Եթէ քաղաքակրթութեան լաւ և յոռի կողմերն ի կշիռ դրուին թերևս յոռի կողմերն յաղթանակը տանին։ Մարդկային ընտիր յատկութեանց կարծես զուգահեռ կ՚ընթանան և վատերն։ Եւրոպա այժմ մեր դաստիարակը պիտի լինի, և Եւրոպա իբրև արուեստ կ՚մշակէ նաև այն ամեն մոլութիւնները որ երբեմն անծանօթ էին ասիական ժողովրդոց։ Ինչպէս գողութիւնն, ղօշաքաղութիւնն, նենգաւորութիւնն յատուկ արուեստներ կ՚դառնան, նոյնպէս սուտիւնն, բոլոր չարեաց աղբիւրն, կատարելագործութեան կ՚հասնին։

Ուստի դատապարտելի են հայք եթէ՝ ընդհանրապէս նորընծաներու եռանդով՝ կ՚մշակեն սուտաւոութեան արուեստն, և այդ նպատակին կ՚աջակցին ոչ միայն տղեան ու թերեւսիան, այլ և լուրջ մարդիկ, այլ և պաշ-

տօնական մարդիկ, այլ և բարձրադիր մարդիկ։ Մինչ պարսաւելի են այն լեզուները ու թերթերն որ վերջէն կամ վարէն ներշնչուելով մեր ընկերական և ազգային այլ և այլ կենսական խնդիրներու վրայ ստութեան քօղը կ'տարածեն և կերպով մը ժողովրդեան ատասիրական հակումները կ'քաջալերեն։ Ո՛նչ հարկ ճշմարտութեան ձայնը լսելի ընել այն ժողովրդեան մէջ որ կ'սիրէ խարուիլ և այդ ինքնախաբութեան մէջ կ'փնտռէ իր դերադոյն երջանկութիւնը, որ բարոյական մեռելութեան երջանկութիւնն է։

Անշուշտ շատ դիւրին է ըսել ընկերաբանի մը հետ թէ՝ ժամանակիս ծանր հիւանդութիւնը վատութիւնն է. թէ ոչ ոք արիութիւնն ունի իր կարծեաց դրօշը պարզել, իբր ճշմարիտ ընդունած իրերուն պատասխանատուութիւնը ստանձնել և իր գործերն համոզումներուն հետ միաբանել, սակայն դժուարին է գործադրել, երբ ունկնդիրները խլացած են, երբ խօլական դիւանագիտութիւն մը և անչահ քաղաքավարութիւն մը ծանրագոյն իմաստութեան կարգն են անցած, վերջապէս երբ ստութիւնը մեր մէջ հզօրագոյն չատադոջներ ունի քան ճշմարտութիւնը։

Անցան այն երանելի օրերն երբ մարդու մը խօսքը գրաւոր պայմանագրի ոյժ ունէր, երբ պարզասիրութիւնն ու անկեղծութիւնն ընդհանուր կանոն մ'էր թէ ընտանեկան և թէ առևտրական յարաբերութեանց և գործերու մէջ, երբ մարդ իր տուած խօսքին գերին էր և զայն գործադրելու համար մահու չափ կ'տառապէր։ Եւ սակայն այդ հին ժամանակները լոյսն ու գիտութիւնն այսքան սփռուած չէին։ Այժմ նենգութիւնն ու ստութիւնն այն աստիճանի ենթհասած մարդկային առ օրին գործողութեանց մէջ անգամ, որ զանազան դիտական հնարներ ի գործ կ'դրուին անոնց առաջն առնելու համար։ Այսպէս գիտութիւնն օգնութեան կ'կոչուի քաղաքակրթութեան չարակից չարիքը գարմանելու, գարման որ տևական չկրնար լինիլ, ցորչափ մարդ կային բը-

նաւորութիւնը բարոյական հաստատ հիմ մը չընդունի։ Ուսուցի արձակած անէծքն մեր ընկերական կազմաւորութեան դէմ անուրջ մը լինելէ կ'դադրի։ Ցորչափ հրնարտգետ մարդն և բուռն ոյժն՝ ու և է ձևով, տիրապետեն բարոյական մարդուն և իր իրաւանց վրայ, հաւանական չերևիր որ ընկերութիւնն ստութեանց չրջանէն դուրս ելնէ։

Երբեմն մեր պապերը կ'ըսէին իրենց որդւոցը—Սիրեցէ՛ք և խօսեցէ՛ք ճշմարտութիւնն, որ ճշմարիտ մարդ լինի՛ք։—Այժմ մեր մեծերը կ'ըսեն մեզ.—Կեղծաւոր եղի՛ք. խաբեցէ՛ք, ըստ պարագայից ստուտ խօսեցէ՛ք, որ ձեր բաղդը չինէ՛ք։—Կ'երևի թէ այս վերջին իրաւան, ի նախասահմանս լուսաւորութեան, յաղթանակը կ'տանի չատ պարագայից մէջ Եւրոպա, Նոյնպէս և Ասիա, ստութիւններ կ'ընդունուին՝ իբրև պայծառ ճշմարտութիւններ՝ այն ժողովրդոց մէջ մանաւանդ՝ որ անկարող են մարդկային գործերու և վարմանց չարժառիթները հեռատեսել և ճշմարիտը ստուէն զանազանել։

Բայց կ'թողում օտարազգի յօդուածագիրը խօսիլ ստութեան տեսակներու և ըրած աւերումներու վրայ։

«Բանդ իր մէկ գործին մէջ կ'ըսէ.—Մարդ՝ իբրև բարոյական էակ, առ անձն ունեցած պարտաւորութեան ծայրագոյն բռնաբարումը կ'գործէ երբ ճշմարտութենէ կ'հեռանայ կամ ստուտ կ'խօսի։ Ստուն մարդու մ'արժանապատուութեան լքումն, և կերպով մը ջնջումն է։ Իսկ ստոյիկեան խմաստասէր մը, բարոյագիտութեան անուանի ուսուցիչ, այս վճիռն արձակած է—ստախօսներն են պատճառ աչխարհի ամեն չարագործութեանց։ Կրօնից ամեն հիմնադիրները՝ Կոնֆիկիոս, Պուտհա, Քրիստոս ևն, իբրև պարտ դրած են մարդկութեան վրայ ճշմարտութիւնը խօսելու, և, սակայն, աչխարհս լինչ-սոսկալի ստութեանց մէջ ընկղմած է։ Տեսակները չատ են. ընկերային ստուեր, արհեստական ստուեր, քաղաքական ստուեր, չարահնար ստուեր ևն։ Ամեն մարդ կ'դատապարտէ ստուտը, բայց և այնպէս կ'պատահին այնպիսի պարագաներ ամեն մարդու կենաց մէջ, որ ծանր պայքար մը կ'մղուի ճշմարտութիւնը խօսելու համար։ Ընկերութեան մէջ յատկապէս—ինչ որ կ'կոչուին սպիտակ, անմեղ ստուեր—

սովորական բաներ են։ Կիները չատ ճարպիկ են այս մասին, թէև խաբելու մասնաւոր միտում մը չունին։ Այնքան դիւրաւ կ'ըզգուին որ իրենց զգացմունքը կ'չափազանցնեն։ Միրայիր ցոյցերով կ'համբուրեն հեռաւոր ծանօթներ իրը թէ չատ մտերիմ բարեկամուհիներ լինէին։ Այնպէս ջերմագին բարի գալուստ կը մաղթեն այն անձերու որոցմէ թերևս բնաւ չեն ախորժիր, որ կարծես թէ իրարու համար կարօտով կ'տոչորին։ Լաւ բան է մարդավարութիւնը, բայց համակրութեան և համբոյրներու ցոյց մ'որոց մէջ ոչ սէր կայ և ոչ յարգանք, պարզապէս խաբէական, կեղծ ցոյց մ'է։ Կայ նայ ուրիշ եղանակ մ'որով կիներն կ'խաբեն ընդունելութեան սրահներու մէջ, այս եղանակն է անխոխը համանման մարդավարութեամբ և մտերմութեամբ պատուասիրել թէ անպիտան և թէ գերազնիւ բնաւորութեան տէր անձերը։ Այս ամենամեծ երևոյթը կ'երևի անգլիական բարձրը դասակարգի մէջ։ Ոչ միայն սուտութեան օրինակ մ'է այս, այլ և եպերելի թեթևամտութեան ցոյց մը, քանի որ օտար սիտղոաներու տէր կասկածելի անձնաւորութիւններ կարող են աւելի ջերմ ընդունելութիւն գտնել կանանց ընկերութեան մէջ քան թէ իրենց իմացականութեամբ և առաքինութեամբ երեւելի հանդիսացող հայրենակիցներ։ Ընկերային կեղծ պատչաճութեան բարուրանօք կանայք — ինչպէս նաև մարդիկ — ճըշմարտասիրութենէ կ'խորչին։ Կ'խօսին ինչ որ կ'անուանեն սպիտակ սուտ, վասն զի, կ'ըսեն, ընկերութիւնը չէ կարող յաւաջանալ առանց այդ սուտութեանը։ Այնպէս կ'կարծուի թէ անյարմար է խօսքով բացատրել ինչ որ իրապէս կ'զգան ու կը խորհին։ Ոմանք կ'ըսեն թէ գովասանական ցոյցերը իրօք սուտեր են, բայց երբ աւեն ոք գիտէ թէ այդպէս են, ոչ ոք կ'վիրաւորուի։ Բայց եթէ կան անձինք որ պայմանադրական սուտութեանց արժէքը քաջ գիտեն, կան նաև այնպիսիներ որոց ընկերային բոլոր կեանքը սուտ մ'է։ Ասոնք իրրև մեծասուններ կ'տպրին թէև, անկարող են օրինաւոր պարտքեր վճարել։ Ճոխաբար կ'հագուին ու կ'չքուին երբ պարտատէրներն անվճար մնալով կ'տառապին։ Այսպիսիներ տօն օրերը սուրբ կ'պահեն և բարեպաշտութեամբ աժեն կիրակի եկեղեցի կ'յաճախեն, բայց ընկերութեան և դործերու մէջ կատարեալ ստախօսներ և կեղծաւորներ են։ Կան նաև այնպիսիներ որ իրենց ազնուական ծնընդեան և կայոյտ արեան վրայ կ'պարծին և որ, սակայն, ոչ նախնիք ունին և ոչ ժառանգականութիւն։ Այդ ունայնասիրու-

թեամբ և ստախօսութեամբ միայն ծաղրելի և արհամարհելի արարածներ կ'լինին։ Կ'ըսուի թէ ստախօսութիւնն աւելի սովորական է կիներու մէջ։ Մանկունք չատ աւելի հակամէտ են ստախանութեան քան հասուն անձինք։ Ո՞վ է մեղաւորը։ Երբ կիներն բանի սորկութեան և հպատակութեան մէջ կ'պահուին, կ'ստիպուին սուտ խօսիլ որ այլ և այլ նեղութենէ ազատ մնան, ինչպէս և տղայք կ'ստեն պատժուելու երկիւղէն։ Ճշմարտութիւնը սիրոյ, ազատութեան և վստահութեան շնորհիւ կըրնայ քաջալերութիւն գտնել . . . ։ « Սուտը մէկ կողմէ երկիւղի, միւս կողմէ բռնասիրութեան ծնունդն է . . . ։ » Մեր ընկերական արդի վիճակն այնպիսի հին ու նոր ստութեանց վրայ հիմնուած է, որ բնապէս սուտը տեսակ մ'ուսում կ'դառնայ որով կ'ապականին միտք ու սիրտ։ Մեր կրթական, օրէնսդրական եւ հիմնարկութիւններն անման չեն այդ ուսումէն։ Եւ իրօք՝ զայն դիւրացնելու համար ձեռնհաս հեղինակութիւններ զանազան նութիւններ հաստատած են սուտերու մէջ։ Աւելորդ կ'համարինք այս զանազանութիւնները նշանակել, քանի որ սուտն ինչ դոյնով որ երեւան գայ իր անունը չփոխեր։ Այսպիսի բարոյական դրութեան մէջ գտնուող ժողովրդեան մը համար եթէ կայ նոր բան մը, աւելի բան մը, աններելի բան մը, այս է ճշմարտութիւնն . . . ։

ՓԹՐԱՆՔ

Մարդ մ'որ միայն կ'թարգմանէ, երբէք բանաճիւս չպիտի լինի, ոչ պատկերահան մ'այն որ միայն կ'ընդօրինակէ, ոչ լուծող մ'այն որ միշտ փամփուշներով կ'լողայ. նոյնպէս ժողովուրդ մ'որ միայն ու բիշներուն աղօթասիրութեան վրայ կ'դնէ իր յոյսն, առանց յառուկ ճարտարութիւն մ'ունենալու, միշտ ադեամ պիտի մնայ։ Վ. ԴԷՄՐԻ.

Կարճ շարադրութեան մէջ երկար խօսքեր, կ'նմանին մեծ սենեակներու փոքրիկ սան մէջ։ ՇԷՆՍՏՕՆ

Լաւ բան է ծիծաղիլ, եւ երբ շիւղ մը կրնայ խաղտել մարդ մը, երջանկութեան գործի մէ այն։ Ընտասուցները կարող են լալ երբոր ատատպին, բայց չեն կարող ծիծաղիլ։ ՏՐԱՅՏՂՆ

Սէրը միշտ գեղեցկութեան ծնունդ չէ, բայց ինչ որ կ'սիրուի գեղեցիկ կ'երեւի սիրողին։

ՍԻՏՆԻՑ

Սէրը սովոր է համրներ ընել ականջ որ շատ լաւ կ'խօսին։

ՍԿՈՒԴԷՐԻ

Սէրը կրից մէջ ամենէ զօրաւորն է, վասն զի կ'հարուածէ այն իբ գլուխը, իբ սիրտը եւ իբ մարմինը։

ՎՍԼԴԵՌ

Գրագիտի մ'ամենէ մեծ դժբաղդութիւնն չէ թերեւս իր պաշտօնակիցներուն նախանձու առարկան, բանասիրութեան գոհ, աշխարհի զօրաւորներուն արհամարհանքը լինելն, այլ չիմարներէ դատուիլն է։

ՆՈՅՆ

Դատաւորները կ'ախորժին խօսիլ, նատահանգստին մէջ, փոքրիկներու վրայ։ Բայց միթէ նատահանգիստ մը կայ այս աշխարհիս մէջ։

ՆՈՅՆ

Հուրը կ'այրէ միայն երբ անոր մօտ ենք, բայց անուշ եւ գեղանի դէմ մը կ'այրէ ու կ'բորբոքէ, թէեւ հետու լինինք։

ՓՍԵՆՈՓՈՆ

Սէրը ազնիւ հոգիները կ'կատարելագործէ։

Լ.

Շիկայ ապուշ մը այնքան ծիծաղելի որքան այն որ ամենագիտի հռչիւր կ'առնու եւ իր ապշութեան վրայ ամենաքեթեւ կասկած մը չունի։

Ֆ.

Երբոր կանայք կը պճնուին, ամենէն աղտորը միշտ ամենէն գէշ պճնուածն է։

Ս.

Տարօրինակ չէ՞ տեսնել Եւայի աղջիկները միշտ իրենց արդուզարդով զբաղած, մինչդեռ իրենց հանգիստ այնքան ինչ հազուած էր։

Ա. ՀԻՒՍԷՑ

Հացն չէ որ կ'պակսի 19րդ դարուն այլ զգեստն է։

ՆՈՅՆ

Սեղանի բարեկամները — մուխ եւ գաղջ ջուր։

ՇԷՈՓՍՒՐԻ

Ի՞ՆՉ Է ԾԱՆՑԱՆՔԸ

Երբեմն, ինչպես թուրքիոյ ուրիշ հայ թերթեր, Ա. Մամուլն ալ մկրատուելով ու մրոտուելով կ'մտնէր Ռուսիոյ պետութեան սահմանը։ Բաւական տարիներէ ի վեր՝ Ա. Մ–ոյ մուտքն ի Ռուսիա գլխովին արգիլուած է։ Անչուշտ այդ արդելքը դրուած է ռուսական կառավարութեան հրամանաւ։ Շատ մեծ պատիւ մ'է այդ Ա. Մ–ոյ համար, սակայն ցարդ չէ կրցած իմանալ թէ ինչպէս արժանի եղած է այդ պատուոյն ամենաթերթ մ'որու ձայնն այնքան զօրաւորն չէ որ կարող լինի յեղաշրջել Կովկասի հայոց միտքն զանազան ազգային հարցերու մասին, թերթ մ'որ քաղաքական օրէնքէն չէ այլ միայն արձադանք մ'իր ամսական պետ–ընծոյ քաղաքական կարեւոր լուրերու որոց վրայ մանրազատում քննական և դիտողական յօդուածներ հայ և օտար օրադիրներու մէջ կ'տեղան, թերթ մը վերջապէս որ՝ քան տարի է ի վեր՝ տիրող իշխանութեան և Ազգին շահուց անձնուէր, տազդրական կանոնաց համակերպելով հանդերձ, կ'ջանայ նոյն իշխանութեան հետ բարեկամական յարաբերութեանց մէջ գտնուղ տերութեանց նկատմամբ ամենայն պատշաճութեամբ ի հարկին գրել։ Ուրեմն ինչ է այդ թերթին յանցանքը։ Միթէ երբեմն կաթողիկոսական խնդրոյն վրայ հրատարակած յօդուածներն են, յօդուածներ՝ որ, տարիները առաջ, իրրեւ հոլ անցան մեր Ազգային ժողովին ականջէն և մաղի չափ չկասեցուցին զինք իր կանխակալ որոշումներէն, որոց աննախանձելի իրական հետեւանքն հետզհետէ պիտի տեսնէ հայ ժողովուրդը . . . ինչպէս առ այժմ կ'լսէ հայ օրադիրներէն Ռուսիոյ ըրած և ընելիք նոր անօրէնութիւնները մեր եկեղեցւոյ, մեր եկեղեցականութեան, մեր կրթութեան և ազգային կալուածոց մասին . . . ։

Բայց ենթադրելով որ այդ է Ա. Մ–ոյ յանցանքն, ինչո՞ւ համար չվերնար արդելքն կամ պոռնկը, քանի որ Ր. Դրան հրամանաւ արգիլուած է Ա. Մ–ոյ գրել կաթողի-

կոսութեան խնդրոյն վրայ։ Եթէ մէկ կողմէ զարմանալի չթուիր մեզ Օսմանեան բարեխնամ կառավարութեան այդ հրամանն, հրաման՝ որ ներկայ պարագայի մէջ շատ բանաւոր և հասկանալի է, քանի որ չկրնար խընդիր, վիճաբանութիւն լինիլ, ուր որ նիւթ, առարկայ, կաթողիկոսութիւն չկայ, միւս կողմէ անբացատրելի կ'երեւի մեզ Թուրքիոյ խեղճ հայ թերթերու արտաքսումն ռուսական սահմանէն։ Մինչ իրաւացի չէ ըսել, որ Օսմանեան կառավարութիւնն աւելի խոհական, աւելի մեծանձն է քան Ռուսականն, որ թէև հայոց կրօնական շահերու առանցքն իր ձեռաց մէջն ունի, բայց կ'զլանայ մեզ կրօնային և մտային աղատ յարաբերութեան մէջ մտնել մեր կովկասի եղբարց հետ, չթողուր մեզ ֆռէ վշտանել, մամլոյ միջոցաւ, ողբալի իրողութեանց վրայ, մինչդեռ Օսմանեան լուսամիտ կառավարութիւնը թոյլ կ'տայ որ կովկասեան թերթեր մուտ գտնեն իր երկրին մէջ, թէև ստէպ աննպաստ գոյներով ներկայեն մեր երկրին գործերը։ փոխադարձութեան օրէնքն միայն կարող է լաւ յարաբերութեանց մշակման օգնել, և երբ մէկ կողմէ ազատօրէն գրելու կ'արտօնուին ռուսական թերթեր և անարգել մեր մէջ մտնելու, և միւս կողմէ հայ թերթերու Ռուսիա մտնելու այդ արտօնութիւնը կ'զլացուի, փոխադարձութիւն չմնար, այլ պարզապէս անիրաւութիւն, ճշմարտութեան երկիւղ։

Եթէ մասնաւոր թղթակցութիւններ մերթ ընդ մերթ չերեւին Պօլսոյ հայ թերթերու մէջ, բոլորովին անտեղեակ, մուրը պիտի մնար Թուրքիոյ հայն կովկասեան ազգային անցից ու դարձուածոց մասին։ Սակայն եթէ կաթողիկոսութեան խնդիր կայ, հետևապէս և այդ մասին գրելու նիւթ, կան անշուշտ ի կովկաս իրողութիւններ որ ազգային ուրիշ կենսական շահերու հետ վերաբերութիւն ունին։ Ահա այդ իրողութեանց վրայ Պօլսոյ թերթեր, իւրաքանչիւրն իր տեսակիտին համաձայն, կ'հրատարակեն զանազան լուրեր։

Այս տաւալի լուրերու կարգէն էին Գէորգեան ձե-

մարանի անկարգութիւններն, կաթողիկոսի գոյից գողութիւնն, Սինոդականաց երկպառակ վիճակն, Տեղակալական արտօնութեանց վէճերն, Ռուսիոյ կառավարութեան նորանոր պահանջմունքն, և ի վերջէ, իբրև պսակ և լրումն օրինաց, նոր Պալոժէնիայ մը խմբագրութիւնն՝ ի ձեռն Ռուսաց կրօնից պաշտօնէութեան . . . :

Կովկասէն մեզի հասած նամակներէն մենք ևս կ'հրատարակենք հետևեալն որ կ'վերաբերի էապէս Ռուսիոյ կառավարութեան մի քանի բաբէնորոժնէյա՝ ի մասին հայրապետական Աթոռոյ իրաւանց։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Թիֆլիս. — Անձնական գործերով Թիֆլիսից հեռացած լինելով, անկարող եղայ թղթակցութիւններս չարունակել. Արդէն ձեզ առիթ եմ ունեցել մի քանի անդամ գրելու մեզ, ռուսահայոց համար էական նշանակութիւն ունեցող դպրոցական և կալուածական խնդիրների մասին։ Այժմ այդ խնդիրներին աւելանում է նաև մի երրորդ, կառավարութեան՝ դէպի մեր հոգևորականութիւնը բռնելիք ուղղութեան խնդիրը, որը մի այն վերջերս, Մակար Կաթողիկոսի մահուամբ՝ յայտնի եղաւ հասարակութեան։

Այն օրից, որ «Պալաժէնիան» հաստատուեց՝ որպէս Ռուսիայում հայ եկեղեցու ու պետի և Ռուսաց կառավարութեան փոխադարձ յարաբերութիւնների պայմանագիր, հայ եկեղեցին կորցրեց իւր ինքնուրոյնութեան մի մեծ մասը։ Անշուշտ սկիզբ. Ներում «Պալաժէնիայի» ծանրութիւնն այնքան էլ ղժալի չէր կարող լինիլ մեզ համար, քանի որ կառավարութիւնը ինքն էլ այդ զէնքը պահպանում էր ապագայի համար, երբ աւանդական և օրինական իրաւունք կ'ստանար դառնալ Եւ իրաւի, թէև Յովհաննէս կաթողիկոսը իւր վեղարը դեռին խլեց և կաթողիկոսական աթոռից հրաժարուելու բազմանք ունեցաւ «Պալաժէնեայի» մի քանի կէտերից սարսափած, բայց նա դեռ չէր կարող հասկանալ, թէ ինչ չղթայ էր այդ պայմանագիրը, որով

կաչկանդուելու էր ապագայում հայ եկեղեցին և նորա դարեւոր, ազատ սկզբունքների վրայ հաստատուած իրաւունքները բռնաբարուելու . . . ։

Սակայն, ինչպէս երևում է, Ռուս կառավարութիւնը չէ բաւականանում հայ եկեղեցու վրայ այսօրինաբար ստացած իրաւունքներից, նա ուզում է կաթողիկոսից խլել նաև նրա վերջին իրաւունքները, որիչ խօսքով, նա աչխատում է ամենայն հայոց կաթողիկոսի տիտղոսն ու գահը Ս. Էջմիածնում պահելով հանդերձ այնպէս անել, որ դա իր իրաւունքներով և ազդեցութեամբ լոկ վանահայրութիւն դառնայ։

Ես յիրաւի, ինչ մնաց մեր հայրապետական իշխանութեններից լոկ ստուերն։ Այժմ հայրապետն իրաւունք չունի իր ուզեցած մարդին առաջնորդ նշանակելու՝ եթէ միայն դա Ռուս կառավարութեան հաճելի չէ, նա մինչև իսկ իրաւունք չունի իր ուզած հոգևորականին Ս. Էջմիածնի ճեմարանում անգամ կրօնուսոյց նշանակելու. ո և է առաջնորդ կարող է աթոռի դէմ ըմբոստ գտնուիլ — կաթողիկոսն իրաւունք չունի նրան պաչտօնից ղրկել, մինչև որ կառավարութիւնը չթոյլատրէ։

Սակայն այս բոլորի հետ հայրապետական աթոռն գոնէ իրաւունք ունէր յանցագործ հոգևորականներին մարմնաւոր իշխանութեան արդարադատութեան մատնուելուց առաջ, իրենց դատն անելու, ապա թէ կարգաղուրկ անելով յանձնել կառավարութեան ձեռքը։ Իսկ այժմ, այժմ այդ իրաւունքն էլ բռնաբարուելու վտանգի մէջ է։ — Մակար կաթողիկոսը իր մահից առաջ ռուսաց ներքին գործերի մինիստրութիւնից ստանում մի գրութիւն, որով նրան յայտնում են, թէ՝ երբ ո և իցէ հայ հոգևորականներից խառնուած կ՚լինի ո և է չարժման, որը կառավարութեան հաւացքներին անհամապատասխան կ՚լինի, անմիջապէս կալանաւորելու է, դատելու (կամ չդատելու, այլ վարչական եղանակով պատժի ենթարկելու) և օրական 30 կոպէկ ապրուստի փող նշանակելով պատժելու. ապա թէ այդ մասին յայտնելու է կաթողիկոսին։ Այսպէսով ուրեմն կառավարութիւնը միշտ և ամեն մի րոպէ պիտի կարողանայ հայ հոգևորականներին մէջտեղից բառնալ։ Մտածեցէք, թէ ո՞ւր կ՚տանէ սա մեզ, կարո՞ղ ենք այնուհետև պնդել, թէ հոգևորանանութիւն ունինք . . . ։

Ահա այստեղ Մակար կաթողիկոսը աթափում է և հասկանում, որ այլ ևս ժամանակ չէ կիսատ միջոցներով գործելու և

պատասխանում է, պատասխանում է կաթողիկոսի արժանապատուութեան վայել մերժումով, պատասխանը գրած է, ստորագրած և կնքած, բայց չէ կարոզանում ուղարկել — որովհետև յաջորդ օրն առաւօտեան վախճանեցաւ է. գտնուում։

Արդէն Մակար կաթողիկոսի անակնկալ մահուան լուրը հասարակութեան մէջ կասկած էր ծնեցրել մահուան բնական լինելու առթիւ . . . ։ Նա հաւատարապէս մերժեց նաև ուրիշ երկու առաջարկները, որ կառավարութիւնն առաջին դրութեան հետ միասին է ուղարկած եղել։ Այդ դրութիւններից միևը վերաբերում է հայ դպրոցներին։ Թէև դեռ ճիշտ յայտնի չէ դրա բովանդակութիւնը, բայց որպէս հաստատ բան չկայ է այն լուրը, որպէս թէ կառավարութիւնը առաջարկում է նախ՝ հայ ծխական եկեղեցական ուսումնարաններում բոլոր առարկաները ասանդել (բացի հայ լեզուից և կրօնից) ռուսաց լեզուով, երկրորդ՝ ոչ մի ճեմարանաւարտ կամ թեմական դպրոցաւարտ իրաւունք չունի հայ դպրոցներում ուսուցչութիւն անել առանց ռուսաց ուսուցչի իրաւունք ստանալու (նոյն իսկ հայ լեզուից և կրօնից)։ երրորդ՝ բոլոր պետական դպրոցներում, ուր հայ աշակերտներին հայ լեզու և կրօն է ասանդւում, դա կատարուի ռուսաց լեզուով, որովհետև աշակերտները որպէս թէ հայերէն չեն հասկանում։ Բնականաբար դրա հետևանքն էլ լինելու է այն, որ քահանաները պիտի պարտաւորուին ռուսերէն դիտնալ և, երևի, ռուս ուսուցչի վկայական ունենալ։ Որ այդ պահանջն առաջադրելու է՝ դրա մի ապացոյցն այն է, որ այժմ ռուսաց դատարաններում այլ ևս չէ թոյլ տրւում հարկաւոր դէպքում հայ քահանաների հայերէն երդուեցնել։

Թէ ինչ է պատասխանել կաթողիկոսն այդ թղթին (միայն սևագիրն է արել) դեռ յայտնի չէ, բայց որ դա մերժողական է — այդ հաստատ է, ասում են։ Որ պատասխանը մերժողական է լինելու — դրան բաւական հիմքեր կան հաւատալու. կաթողիկոսը վերջին ժամանակներս հաստատապէս այդ ճանապարհով էր գնում, որի ապացոյցներից մէկին էլ հէնց վերևում յիշած երդուեցնելու խնդիրն է, որի մասին հանգուցեալ կաթողիկոսը խստիւ պատուէրով կարգադրել է, որ ոչ մի հայ հոգևորական չհամարձակուի ռուսաց լեզուով ոևէ հայ երդուեցնել։

Երրորդ դրութիւնը վերաբերում է վանքային կալուածական խնդրին, կառավարութիւնը, ինչքան իմացայ, առաջարկում

է, որ վանքապատկան կալուածները յայծնուին կառավարութեան, որի փոխարէն կառավարութիւնը խոստանում է Էջմիածնին տարեկան մի որոշ % եկամուտ տալ։ Հասկանալի է, որ այդ կալուածների մէջ են հաշուած նաև Էջմիածնի մի քանի գիւղերը, որոնց նա տիւրիլեան դրութեամբ է տիրապետում։ Ինչպէս յայտնի է, տիւրիլեան դրութեամբ կալուածատէրը ամենաընդարձակ իրաւունքներ ունի իր կալուածների վրայ և նոյն իսկ պետութիւնն իրաւունք չունի ոևէ կերպով միջամտելու այդ կալուածների կառավարութեանը՝ ոչ տուրք վերցնելով և ոչ էլ մի այլ միջոցներով, բացի դատական և վարչական (ընդհանուր պետական) միջամտութիւնից։

Մակար կաթողիկոսը սոյն գրութեան էլ է պատասխանել մերժողաբար, բայց ինչպէս նախընթացի, նոյնպէս և վերջին գրութեան պատասխանները գրել է միայն և չէ արտադրուած ու ստորագրուած։ Սակայն կաթողիկոսը, ինչպէս պատմում էին Ս. Էջմիածնից եկողները, շտապելիս է եղել դրանց պատասխաններն էլ գրելու և այդ յայտնի է եղել բոլորովին . . . և յանկարծ վաճառուում է սրան կաթուածից՝ եթէ հաւատանք տեղական ուուս թերթերին։

Այս խնդիրները նոր չեն. դրանք յարուցուել են նաև նախկին կառավարչապետ Դոնդուկով–Կորսակովի օրով, բայց ինչպէս հաւատացնում են, այն ժամանակ բանակցութիւնները դեռ բանաւոր են եղել, իսկ գրաւոր դարձան միայն ներկայ կառավարչապետ Շերիմետևի Պետերբուրգից վերադառնալուց յետոյ, ուր նա կանչուած էր յատկապէս Ռուսիայի հայոց ուսումնարանների, վանքական կալուածների և կաթողիկոսի դէպի կառավարութիւնն ունեցած յարաբերութիւնները կանոնաւորելու նպատակով կազմուած խորհրդին մասնակցելու։

Երբ Շերիմետևը Պետերբուրգից վերադարձաւ յամառաբար լուրեր էին պատում, թէ նրան լիազօր իրաւունք է տրուած այդ խնդիրների վերաբերմամբ իւր բարձր համարած եղանակով գործելու և երկու փոխադարձ յարաբերութիւնները կանոնաւորելու (?) ու ուսաց տեսակէտին առաւել ձեռնտու եղանակով (ուշադրութիւն) համապատասխան կացուցանելու։

Եւ ահա նրանք կանոնաւորում են մեր դրութիւնը։ *

Մայիս 1870 ՀՐԱՏ

* Սոյն նամակին, որ ուշ հասաւ մեր ձեռքը, զանազան կէտերու վրայ կ՚ընդդիմանան Պոլսոյ հայ լրագիրները արդէն գրած են։ Ծ. Խ.

ՄՈՒՇՏԱԿԱԴՈՐՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՓՈԿԻ ՄՈՐԹ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԾԱԽՔ

Մորթերու մեծ մասն, որոց մէջ են վոկի, սամոյրի, արջի աղուէսի, մկնամկի, ջէյէք, կուղբի և ջրաղուէսի մորթերն, գոնատայէ կամ Հիւսիսային Ամերիկայէ կ'գան, բայց անոնցմէ մաս մ'ալ կ'գայ Ռուսիայէ և Սիպերիայէ։ Կեդրոնական Ասիայէ կ'ըստանանք զանազան ոչխարի, մանաւանդ գառնուկի մորթեր, ինչպէս Պարսկաստանի, Ասարախանի, Թիպեդի և Ասարալիայէ կ'ընդունինք պարկերէն ի բաց առեալ ոչխարն և հոլանտական կամ գերմանական կատուն՝ մորթ հայթայթող կենդանիք ամենն ալ վայրի են և, ինչպէս վոկն, որոգայթի միջոցաւ կամ որսորդութեամբ կ'բռնուին։ Բայց որսորդն հաղնողին հասնելու համար մորթերը շատ ձեռներէ կ'անցնին։ Նախ՝ որսորդն կամ դարանամուտը կ'տանի զայս մորթով ղրաղող մեծ ընկերութեանց միոյն, կամ վաճառականաց դործակալին։ Վաճառականէն կը անցնին տարազագործին, թէև այս վերջինն յաճախ ուղղակի որսորդներէն կ'գնէ, եթէ իւր գործառնութեանց սահմանն ընդարձակ է։ Մորթերն տարազագործին կ'հասնին նախնական վիճակի մէջ՝ նոր աղուած, բայց տակաւին գործողութեան չենթարկուած են։ Նա դուրս կ'ղրկէ զանոնք, տարածելու, ողորկելու և շատ պարագայից մէջ ալ ներկուելու համար։ Երբ ետ կ'դառնան կաչիներն իրենց յատկութեան համեմատ կ'դասակարգուին և ապա՝ հազուագէպ պարագայից մէջ՝ յանձնարարողին կ'ղրկուին և կամ վաճառատունն կ'զետեղուին։ Վերջապէս կ'երթան կաչիի յատուկ վաճառականին և մանրավաճառին պատուհանին մէջ կ'երևին։ Այսպէս կաչիներն վեց կամ եօթ ձեռներէ կ'անցնին, և վստահօրէն կարելի է ըսել թէ մեծագոյն չահն կ'ընէ խանութպանն, իսկ փոքրագոյնը որսորդն։

Ցամաքային գործառնութեանց մեծագոյն վաճառանոցն Լայբցիկի տարեկան տօնավաճառն է, բայց անգլիացի գործարանատէրք պէտք չունին անոր սպասել։ Լոնտօն՝ կաշւոյ, ինչպէս այլ իրաց համար, աշխարհի մեծագոյն վաճառատեղին է։ Ամէն և գերման վաճառականք յաճախ ատ գնումներ

կ'ընեն Լայբցիկի տօնաճառախին համար։ Պարկերչի կաչին դարմեալ Լոնտօն կ'ղրկուի առ հասարակ, որպէս զի յղկուի, ներկուի և գործուի և ապա ծախուելու համար կ'ղրկուի Ամերիկա։

Բանաւոր պատճառներ կան կարծելու թէ փոկի մորթն իրապէս սպառելու վտանգին մէջ է։ Անցեալ Նոյեմբերին՝ Լոնտօնի վաճառանոցը 21,000 կաչի միայն տուին, մինչդեռ սովորական թիւն էր 100,000։ Ալասքայի տարեկան արտադրութեան արդիւնքն որ առաջ 100,000ի կ'հասնէր, նոր ատեններս վերածեցաւ 60,000ի և արդարև վերջին տարւոյն արտադրութիւնն նուազագոյն եղաւ։ Հաւանական է որ ժամանակ մ'անարդիւն պիտի մնայ այդ բերքն և փոկի մորթը, արդէն հազուագիւտ, հրապարակէն պիտի քաշուի։ Երկու տեսակ փոկ կայ մուշտակային և մազեայ։ Առաջինն որ ամենէ աւելի թանկագինն է, կ'գայ Ալասքայէ, Լոպօսեան կղզիներէ, իսկ վերջինն Կրինլէնտէ։ Իրենց մէջ եղած տարբերութիւնն անուշէն կ'հասկցուի հերաւոր փոկն աւելի մազոտ է, և որ դեղմի և մակի մէջ եղած յարաբերութեան խնդիրն կ'յարուցանէ։ Ճշմարտութիւնն այս է որ մաքուր մուշտակը երկու իրէ կ'բաղկանայ — մազէ և գեղմէ։ Ի՞նչ է ասոնց մէջ եղած տարբերութիւնն։ Մի քանի տարի առաջ՝ ղեստի համար այս նիւթոց ընտրութեան վերաբերմամբ կծու թղթակցութեան մի անմիջապէս կ'յաջորդէր Մանրացոյցային Ընկերութեան (Microscopical Society) մէկ վճիռն որով կ'յայտարարէր թէ անոնց մէջ տարբերութիւն չկայ։ Չկայ — այո՛ մանրացոյցին համար, որ մի միայն այն գործիքին անբաւականութիւնը յուցնէ. դի մեզ համար շատ որոշ գործնական տարբերութիւն մը կայ և աստի կախում ունին փոկի մորթէ հանդերձանք։ Մազի թելերն աւելի կոշտ, աւելի ուղիղ, աւելի ցանցառ, ընդհանրապէս խօսելով աւելի երկայն և նուազ տաքուկ են քան գեղմի թելերն։ Արջի կամ իւայծեամի մորթըն գրեթէ ամբողջովին մազ է, ոչխարինն կամ խլուրդինն ամբողջովին գեղմ է։ Լաւագոյն մորթերն ունին երկուքն ալ և այս տեսակներէն է փոկի մորթն։ Փոկի մորթը տարազագործն կ'հանի աւելի կոշտ վիճակի մէջ քան այլ ո և է կաչի, և թերևս երեք ամիս կուզէ յարդարուելու և ներկուելու համար։ Բնական վիճակին մէջ կոշտ, խիտ մակերևոյթ մ'ունի ագեզ, դորշ գոյնով։

Եղանակն որով այն կ'փոխուի գեղեցիկ, աղորկ և կանանց

սիրելի առարկայի մը, այս է թէ՝ պէտք է նախ ճկան իւղն և ապա մազը մաքրել։ Այս գործողութիւնը կ'կատարուի մորթին վարի կողմի խաւը ածիլելով և այսպէս մազերուն արմատներն կտրելով որոնք աւելի խոր կ'գտնուին մորթին մէջ քան բրդին (կամ գեղմին) արմատները (մի ուրիշ տարբերութիւն)։ Փափուկ գործողութիւն մ'է այս, բայց երբ յաջողապէս կատարուի մազը տաքութեան ներդործութեամբ բոլորովին կ'թափի, բուրդը անեղծ թողլով։ Այս կ'տեսնուի երբ թեթև թուխ գոյնով գառնուկի մազերու նման՝ սիրուն վոքրիկ գանգուրներ երևան կ'ելնեն։ Ներկարարն կ'ամբողջացնէ կերպարանափոխութիւնն. ներկին տակ այս գանգուրներն կ'երևին ուղիղ և թուխ։ Փակի մազն ալ կ'ներկուի, բայց այլապէս չպատրաստուիր։ Շատ վոկի մորթերն խանութներու մէջ՝ իրապէս վոկի չեն բնաւ, այլ չինուած են մլկամկի կամ ճագարի ներկուած մորթերէ։ Գրեթէ նոյնքան լաւ կ'երևին, բայց իրենց հիւսուածն այնքան հաստատուն և փայլուն չէ։ Նոյն ղեեստին համար իրենց յարաբերական արժէքն են մօտաւորապէս — վոկը 4էն մինչև 8 լ. ս. մլկամուկն 35 շ. ճագարը 14 շ.

Առաջնութեան կարգաւ ամենէ թանկագին մուշտակներն են ռուսական սամոյր, արծաթագոյն աղուէս և ջրաղուէս։ Առաջինն չատ վոկրիկ կենդանի մ'է, աւելի մեծ քան խոշոր յուզակ մը, բայց ընտիր մորթ մը կ'ածէ 30 լ. ս.է մինչև 40 լ. ս. (մեծաքանակ վաճառմամբ)։ Այս պատնէշի մորթէն վերարկու մի լիուլի պիտի արժէ 5,000 լ. ս.

Ռուսականը կ'պատնաշնի հասարակ (գանատական) սամոյրէ այս նկատմամբ որ աւելի երկայն, հաստատուն, մեծաքանման և աւելի մութ գունով է քան երկրորդն որ չատ ալ մեծածախ է։ Այս մորթերն Անգլիա կ'գան ներսի կողմը դուրս դարձուած. բայց լաւ գնորդ մի կրնայ յարկութիւնն հասնիլ զայն պարզապէս չլեզով իր մատին և բթամատին միջև և պչերուն դոյնէն։ Արժէքը ամրութեան և գունոյ նկատմամբ են. սամոյրի պչերն չատ համբաւաւոր են իրրև զգեստի զարդ և միանգամայն չատ մեծածախ են։ Երկրորդ կարգի մորթերով չինուած սամոյրները չատ գեղեցիկ են, բայց 50է մինչև 400 լ. ս. կ'արժեն. սամոյրն ըստ երևոյթին գոյնն չնետեր։ Այսպէս է և արծաթագոյն աղուէսն որ ունի գեղեցիկ, խիտ, գորշ արծաթագոյն կոշի մը։

Աստրաքան եղանակիս նորաձև մուշտակն է։ Երկու տեսակը

կայ, գանգրաձև և ալէձև. առաջինն, պարսկական գառն է և թերևս մէկ մորթն կ'արժէ 30 Շ. մինչ ալէձևն կամ բուն իսկ Աստրաքանինն կ'արժէ 4 Շ. երկուքն ալ գառնուկի մորթեր են՝ յոյժ փոքր, բայց ընդհանուր կարծիքն՝ թէ ոչխարներն ժամանակէն առաջ կ'սպաննուին շատ գեղեցիկ մորթեր ստանալու համար, անհիմն է: Պարսկական գառը կ'հայթայթէ վզի զարդեր, թեղանիք և կանանց թիկնոցակներ որք ամենուրեք կ'երևին: Կ'գործածուի նաև իբրև աստառ արտաքին զգեստուց, բայց այս գործածութեան համար լաւ չէ, լինելով շատ մեծածախս, ծանր և համեմատաբար նուազ ջերմապահ: Այս մորթերը բնականապէս սև կ'լինին, բայց անոնց փայլունութիւն տալու համար կ'ներկեն: Միևնոյն կարգէ է նաև Թիպեթի երկար, սպիտակ, բրդոտ ոչխարի մորթն, որ իբրև նորելուկ երևցաւ երկու երեք տարի առաջ կանանց կրկնոցներու համար: Շատ տաք է և յոյժ վայելուչ: Հասարակ ոչխարի մորթն՝ որուն գործածութիւնը սովորական է կեղրոնական և հիւսիսային Եւրոպիոյ մէջ՝ հոս աւելի շատ կ'գործածուի: Կարելի է զգեստ մ'ունենալ 30 է մինչև 80 Շ.ով, որ շատ դիմացկուն է և ցուրտին անթափանց:

Ա.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

կ. Պոլիս, 27 Յունիս 1891

Բաբկո՛, լաւ մի՛ փնտռեր, քանի որ ամեն ինչ, մինչև անգամ մեր ազգային չաղակրատ ժողովը այս պահուս լուռ է: Իր օրակարգն է լռութիւն: Եթէ կար այդ լռութիւնը խանգարող ձայն մը, այն ևս համբուրեցաւ դատապարտուեցաւ: Բայց այժմ, գիտես, համրներն ու խուլերն ալ յատուկ լեզու ու նշաններ ունին զոր ի հարկին կ'գործածեն: Սակայն եթէ մեր պաշտօնական մարմիններն աւելի գործել քան խօսիլ կ'սիրեն այժմ, ոմն կարող է պրկել գաս մը լեզուաձ արներու լեզուն, որ եթէ խօսելու նիւթ ալ չգտնեն ատուերներու հետ կ'վիճաբանին: Հիմակ ալ ելեր կնկան հետ կ'խաղան, ամուսնական խնդիրներ կ'կրկտեն: —Է՛հ, ալ իլիկս անցաւ այդ ամուսնական խնդիրը, կ'ըսեր ինձ անցած օր Թորոս էֆէնտին: Ո՛ւր որ գառնաս ինչ որ կարգաս ուրիշ խօսք ու վէպ չես լսեր այլ միայն ամուս-

նականն։ Մեր աղբիկները նոյն իսկ մեր կիները գլուխ վերցուցեր են. հիմնական փոփոխութեան մը կ'սպասեն ակնդէտ, որ առաջինները նշանած դանեն և միւսներն իրենց ամուսինները թողուն։ Իրաւունք ունէր Թորոս Էֆէնտին։ Կ'նայիմ, բարեկամ, որ դուռ ալ կ'մրոտես այր ու կնոջ խնդրոյն վրայ և աւելի վերջնոյն դասը կ'պաշտպանես։ Լաւ, մինչ ուրիշ կարևոր խնդիր չմնաց գրելու ու խօսելու։ Կ'երևի որ չմնաց. միայն չատեր կը խօսին ամուսնութեան վրայ և քիչեր կ'ամուսնանան։ Շատերն ալ իրաւացի պատճառներ ունին, քիչերն ալ։ Ժամանակը պիտի որոշէ թէ կիւնն ալ մարդու չափ ազատ պիտի չարժի ամուսնական գործերու մէջ և ըստ հաճոյս այր ու տուն պիտի փոխէ, չէ թէ գաղտնի այլ հրապարակաւ։ Բնութեան ամենէ չարժուն էակն անշարժութեան դատապարտել այնքան անհեթեթ է ու վտանգաւոր, որքան չոգին կաթսային մէջ անընդհատ պահել։ Պայթումներն անխուսելի են, և ամեն օր ականատես վկայ ենք ամուսնական պայթումներու, որ այնքան կ'տագնապեն մեր ընկերական վիճակն և որոց առաջն առնլու համար՝ իրրև ապահովութեան խափակ, օրէնսդիրներ ամուսնալուծութեան օրէնքը տեղ տեղ հաստատած են։ Իմ կարծեօք՝ ամուսնութիւնն՝ ըստ հասակի, երեք աստիճանի վերածելու է։ Պատանեկան, հասունական ու ծերունական, այս վերջինը միայն անլուծանելի հրատարակելով։ Ինչ կ'ըսես այս դիւտիս։ Կարծածիդ չափ ծիծաղելի չէ, այլ զօրծնական . . . բայց թողունք այս կէտն ընկերաններու և դառնանք մեր գործին։

Հիմակ հայն ալ կ'խօսի կնկան վրայ, այս ընկեցիկ, անլուք էակին վրայ։ Ո՞վ դրդեց կինք։ Ծողովուրդ մը, մարդուն պէս, հին հաչիւներ կ'փնտռէ երբ կ'աղքատանայ։ Հայն ալ աղքատ է և կնոջ ծոցը կ'յուսայ դանել կորուսած հարստութիւնը։ Հին, յաւիտենական հաչիւ մ'է սակայն կինն, կրկնատումարի դրութեան ըմբռոստ, միշտ պարտապան և միշտ բաց ունի . . . վիճաբանութեան դուռը։ Այժմ հայ թերթերն այդ բացը գոցելու կ'աշխատին. քանի որ գրականապաշարէ զուրկ կամ կողպտուած, հրապարակագիրն անհրաժեշտ գործանք, խաղ մը կ'նկատէ կինն, ըստ եւրոպական դրութեան, և անոր չրջագեստին ներքեւ կ'կծկի, իբրև ապահովագոյն վայր, և իր տեսակիտին համեմատ, ներքողներ կամ երգիծանք կ'յօրինէ եւայլ թոռուհւոյն սրտին, հոգւոյն և ուրիշ անթիւ այլակերպութեանց վրայ։ Աշխարհականը չէ միայն որ կ'խօսի կնոջ վրայ, այլ և ծանրարա-

րոյ եկեղեցականն, Արիստակէս եպիսկոպոսի նման, որ ամուսնական կնճիռներու լուծում տալու մտօք գրած է, բայց հինը նորին հետ խառնելով աւելի ևս խնդիրը կնճռոտած։ Նախ՝ Հրանտ Ասատուր էֆէնտին լրջօրէն լուծեց, պարզաբանեց այդ գործն, այժմ բժ. Արամեանց Նոր-Դարի մէջ կ'յօշոտէ զայն, և ուրիշներ ալ ամուսնական վարդերու ու փուշերու վրայ երկար բարակ կ'ճառեն, միշտ գանգատելով, որ Ազգ. Պատրիարքարանն, թէև նախանձախնդիր ամուսնական խնդիրներու մասին ունեցած իրաւասութեան, այդ իրաւասութիւնը կանոնաւորելու անփոյթ կ'գտնուի։ Եւ Ազգ. Պատրիարքարանն ալ կ'ըսթափի, կ'ըսէն, և յանձնախմբի մը ձեռօք տրամադիր կ'երևի ամուսնական օրինագիր մը յօրինել։ Անշուշտ հիմնական փոփոխութիւնները սլիտի մտնեն այդ օրինագրին մէջ, բայց միթէ ի նկատի սլիտի առնուին նաև այն օրինական զեղծմունքն որով Ռուսիոյ հայք ազգային ընտանեկան չրջանէն կ'հեռանան և ռուսականութեան անդունդը կ'խորասուղին։

Ահա այդ է կասկածելի, թէև շատ կարևոր . . . ։

ԵԱՀՆՈՒՐ

ՄՏԱՑԻՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՁԱՀՐԱ

Այո՛; Զահրա, կտրող կապող Զահրան է որ՝ այսօր կարմիր-ներ հագած, խնդագին ու թեթևոտն կ'մտնէ լուսափայլ սրահի մը մէջ։ Այլ գունատ է սրտին նման իր ճուտճև դէմքը, կախ՝ իր սրամէտ ծնօտը, պաղ՝ սև ապակիի նման, ծիածանն՝ որու մէջ բիրն չունի ծիր ու կայծ. իսկ սարսռուն են իր հատ չրթերը։ Մտայոյզ կ'երևի Զահրա. քունքը կ'տրոփեն, չպարի թափանցիկ խաւին ներքև դիմագծերը կ'չարժին, լանջը բեհեզէ կրծկալը պատռելու չափ կ'ելնէ կ'իջնէ, կարծես որս փնտռող նորափետուր չահէն մ'է, որ իր տիրոջ ձեռքէն խոյս տալով ե-կած մոլորած է այս սրահին մէջ, և վշտաբեկ կ'փսփսայ. Նա հոս է արդեօք։

Այո՛, հոս է վերջին յոյսդ ու սէրդ Զահրա։ Նշո՛ւկ աղջիկ. քնչ էիր ու քնչ եղար. վաղեմի գեղեցկութեան բեկոր մը, մարը

մանող արուսեկի մը յետին բեկբեկուն չողը։ Ո՞ւր է այն պայծառ, զուարթ կերպարանդ որ երբեմն դիտողին սիրտը կ'բանար, աւաղ, թռչներ, գունատեր է. ո՛ւր են փայլիլն ու աչերդ որ մերթ սիրաւէտ նշոյլներ կ'արձակէին. ափսոս, պաղեր, մարեր են ու տենդային ճառագայթումներ ունին և չլման ակնարկները. ո՛ւր է այն ձիգ, կենսալի իրանդ, ջիր բարակցեր, կորացեր է. հապա աղմկալի ծիծաղներդ և անխմաստ այլ սիրուն կակազումներդ ո՛ւր թողուցիր։ Մինչ չոլորովին ոչի, անմարմին էակ մը եղար Ձահրա։ Եւ սակայն հիւթել և պերճ էր մարմինդ, վէս՝ քալուածքդ, չըշփելի՝ գեղդ։ Մինչ Ձահրա ըստուերն է այն օրիորդին որ աւելի սիրեց գեղեցկին չպարը քան տիպարը, նիւթին դիրտն քան սիրտը, ծաղկին հոտն քան հիւթը, որ աւելի պաշտեց երաժիշտն քան երաժշտութիւնը։ Ո՞ դիտէ։ Բայց Ձահրա իր հին լուսանկարները չատ աւելի կ'սիրէ այժմ քան հայելին, և կ'մխիթարուի։ Ղիտեր Ձահրա որ իր պճնոտ ու ծաղկազարդ գլուխն՝ երկու ցցուած ուսերու մէջ ամիսուած են, վտիտ ու ոսկրուտ ուսեր՝ որ թերևս յոյս կ'տան իրեն թռչնոյ կամ հրեշտակի մ'ոսկեթոյր թևերու պաշտօն վարել և դինք վեր, վեր դէպ ի երկին տանել։ Բայց ինչ երկնասլաց անճուկներ որ տածէ Ձահրա, ինչ հոգեկան ճկտումներ որ կեզծէ Ձահրա, չէ կարող թռթռուել իր հողաչէն մարմինը, չէ կարող այդ մարմնոյն բնակից մարմաջները բուժել։ Անշուշտ չատ երկրային է Ձահրա, իր հաստ չրթունքն, իր լայն ռնգունքն, իր առնաձև կազմուածքն հակամէտ են զգալի հաճոյից, հեշտական կենաց։

Եւ իրաւ՝ երկիրն իր բուռն հովերով, ծովն իր փոթորիկներով, մարդիկ իրենց կրիւք կանուխէն կ'յուզեն, կ'վրդովեն Ձահրաի էութիւնն և անոր վրայ կ'դրոշմեն դառն վորձառութեան, տրտմութեան և մելամաղձութեան անջինջ նշաններ։ Ոչ ընտանեկան սիրոյ ջերմութիւնն, ոչ հայացի դաստիարակութեան փրկաւէտ զգրուխիւն չտուին Ձահրաի սրտի ու մտքի այն կորովն ու նրբութիւնն որ գիտեն զանազանել ճշմարիտը սուտէն, ընտիրը վատէն և դեղեցիկը տգեղէն։ Թէև բուն հայու զաւակ՝ Ձահրա անբուն աշխարհի, օտարոտի չրջանի մէջ՝ ծաղիկ հասակէն՝ կ'սկսի փնտռել իր հետաքրքիր և վառվռուն բնաւորութեան ճարակ։ Սոխակին ճայնն, վարդին գոյնն, երկնից կամարն այնքան հմայք չեն ունեցած Ձահրաի համար, որքան փաղաքուչ լեզու մը, անհամ կատակ մը, միմոսական չար-

ժուամ մը . . . . : Դեռ ևս Ծորաբոյս մի կոյս՝ սանուհի եւրոպեան մի վարժարանի, կ'ուսնի Զահրա ինչ որ կրնար արտաքին միայլ տալ իր անձին, ինչ որ կրնար հրապոյր տալ իր ծանծաղ ու թեթև սրտին: Զահրա սիրոյ այբ ու բկնը կ'հեգէր, և արդէն հետամուտներու երամ մ'իր եահէն կ'ձգէր և կեղծ ու անուսի հառաչներու և հեշտալուր սիրային բզզուծներու մէջ կ'կարծէր լսել իր ոսպագոյ յաղթուհեան փողը: Այս վստահութեամբ կը նետուի նէ գահավիժ ընկերութեան մէջ, կ'քծնի, կ'պչրի, կը արբշռի, կ'քսուի հոյու ու օտարի հետ, չոչորդին ու փախուսկին հետ, նենգաւորին ու մեծարանին հետ, և սակայն իր ներքին ցանցին մէջ ոչ մին որսալու կարող, վհատութեամբ կ'պաչարուի, կ'հալի մամի պէս և ի վերջէ, չատ ուշ, կ'ըսէ ինքնիր՝ — Բաւ է . . . է'հ, բաւ է. քանի՛ վատ են մարդիկ . . . բոլորն ալ սիրադրուժ. թուան հրատապ խոստումներ երազներուս հետ. ո՞հ, ալ չպիտի բռնուիմ, չպիտի խարուիմ, դեռ քսան հինգ դարուն միայն ունիմ. նոր գարնան՝ վարդերս պիտի բացուին բաղիս հետ, պ'նտի բացուի և անկեղծ սրտի մը դուռն իմ առջև — քաջազուն, քաջադիտակ, քաջածայն, քաջածի երիտասարդի մը սիրան, որ անչուշտ կ'սյրի ինձի համար, որ անչուշտ անհամբեր կ'սլասէ ինձ այս սրահիս մէջ՝ ուր իր աչքին մի քաթիֆով, ոլորուն պեխին մի ծայրով ժամադիր եղաւ ինձ, անչուշտ խօսքկապը տալու համար . . . :

Եւ Զահրա, անմիտ գուսան, որ ի բնէ դերասան է ծնած, կարծէ նոր բնական դեր խաղալ, մինչդեռ հինը կ'կրկնէ, և հեռուն ընդնշմարել իր ոսկեթել պսակն: Եւ սակայն դեռ կ'մաչի Զահրա . . . :

Վ. Ի Ն

ՀԵՐՔՄՆԱԴԻՐ

. . . Մատթէոս Ֆ. Մամուրեան
Խմբագիր Աբէլեան Մամլոյ ի Գաղաքիս
. . . Խմբագիր

Ձեր Աբէլեան Մամլոյ տարւոյս Մարտ ամսաթերթին մէջ քաղաքիս Ազգային երկաեռ վարժարանաց, և նոցա Տեսուչ Մեծ. Տ. Տէր. Միրաքեանցի նկատմամբ անուանարկիչ նամակ մի տեսնուելով, Ազգային Գաղաքական ծողովս հարկ եղած քննու-

թիւններն կատարելէ ետև ներկայիս կուգայ յայտարարել թէ՝ յիշեալ նամակի պարունակութիւնքն ձրի անուանարկութիւնք են, և առաւել յարձակողական ոգւոյ քան ողջմտութեան արդիւնք։ Հետևաբար ժողովս սոյն հերքման դիրքը կը դրկէ որ հաճիք Ձեր ամսաթերթին մէջ հրատարակել անկողմնակալ ոգւով։

Մնամք յարգանօք

Ազգային Ֆաղաքական ժողովի

Կնէֆ

Զմիւռնիա

21 Յունիս 1891

Սոյն հերքմնագիրն անկողմնակալ ոգւով հրատարակելէ ետև՝ խմբագրութիւնս անպատեհ չհամարիր մի քանի դիտողութիւններ ընել մի և նոյն անկողմնակալ ոգւով։

ա. — Ա. Մոմճեան Ապագայ Հայոց ստորագրութեամբ նամակն՝ մի քանի ծնողաց թախանձագին խնդրանաց համեմատ, հրատարակելով ուրիշ նպատակ չունէր այլ միայն ազգային ձեռնհաս մարմնոյն ուշադրութիւնը հրաւիրել, յօդուտ կրթութեան, ազգային վարժարանաց մասին արդէն ուրիշ օրագիրներու մէջ գրուած, և ընդհանրապէս տեղւոյս հայ հասարակութեան մէջ պտըտած անախորժ լուրերու վրայ։

բ. — Ըստ Հերթճեփէի՝ պաշտօնական մարմինն այդ նամակին վրայ քննութիւն բանալու հարկը տեսեր է թէև՝ բայց փնդռտանքներէն առեղակագիրն մեզ հաղորդելու տեղ ի հրատարակութիւն և յանդորրութիւն գայթակղեալ մտաց, բաւ համարեր է երկտող հերքում մը յղել մեզ, առարկելով թէ առաւել յարձակողական ոգւոյ ման ոչխտութեան արտայայտութիւնը։

գ. — Նամակագիրը պարտի գոհ լինիլ որ դոնէ իր գրածներէն ոչխտութեան բաժին մ'իրեն կ'ընծայուի։

դ. — Փափաքելի էր որ Հերթճեփէը կրէր դոնէ ֆաղաքական ժողովոյ դիւանի ստորագրութիւնը քան լոկ կնէֆն, որ վերացեալ հոգիներն մ'է, պատասխանատուութենէ ազատ։

Բայց ինչ հարկ չարունակել դիտողութիւններ, քանի որ Ա. Մոմճեան, չէ թէ լոկ վերոյիշեալ նամակին համար, այլ քսան տարիէ ի վեր իր բոլոր հրատարակած յօդուածներուն համար նոյն պաշտօնական մարմնոյն ենթէնէն անցնելով, իրև անհիմն և հակոտիչն ի պաշտօնէ միահաղոյն դատապարտութեան պատուոյն արժանացած է։ Ուստի միևնոյն մարմինն կամ կնէֆն անօգուտ ծանրութիւն մը ստանձնած է հերքելով նամակ մ'որ Ա. Մոմճոյ մէջ չատ փոքր տեղ մը կ'բռնէ։

ԱԶԴ

Դպրոցասիրաց Ընկերութիւնս երեք տարիէ հետէ կազմուած է Բաղաքիս ազդ· վարժարանաց օժանդակելու նպատակաւ, և նոյնչափ ժամանակէ աստի իւր տեսչութեան ներքև ունի բաւական յառաջադէմ վարժարան մը։ Երկար ատենէ ի վեր փափաքելով նոյն վարժարանի սրահին մէջ Թանգարան մը հաստատել, այժմիկ սկսած է իւր փափաքը իրագործելու ջանալ· վասնորոյ կը խնդրուի համայն ազգ· գրագէտներէ, տպագրատներէ և գրավաճառներէ որ ազգասիրաբար իրենց երկասիրած, ի լոյս ընծայած գրքերէն մէն մի օրինակ ձրիապէս Թանգարանին շնորհել բարեհաճին հետևեալ հասցէիս·

Կ· Պոլիս Առ Պատ· Խմբագրութիւն «Փունջ»

Շարաթաթերթի

Ամենէ Տնօրէն Խորհրդոյս Ատենապետ

Յարութիւն Սէչէնեանի

Ի ղիմաց Դպրոցասիրաց Ընկերութեան

Տնօրէն Խորհրդոյ

21 Յուլիս 1891 Ատենապետ Ատենադպիր

Ամասիա Յ· Մարտիկեան Յ· Յ· Սէչէնեան

. . . Խմբագիր տէր,

Բաղաքիս խնդրէն լրագրէն առնելով Իզմիրի և Պօլսոյ Թերթերը ասկէ առաջ հրատարակեր են Թէ քանի մը դատերու մէջ իբր Թէ սուտ վկայութիւն ըրած ըլլալով՝ ձերբակալուած և դատաստանի որոշմամբ բանտարկուած ըլլամ։

Ինչ մը չափազանց եռանդով հրատարակութեան տրուած այս լուրը սխալ է և Թերի։ Իրողութիւնն այն է որ ժառանգական միակ դատի մը առթիվ կայութեան կոչուած ըլլալով չահակից կողմերէն միոյն պահանջմամբ՝ կանխարգել բանտարկութիւն մը կրեցի Թէև՝ սակայն հարցաքննիչ դատաւորին անաչառ քննութեամբ անմեղութիւնս յայտնուելով, չնորհիւ կայսերական կառավարութեան արդարասիրութեան, անպարտ արձակուեցայ ի մխիթարութիւն զաւակացս և յուրախութիւն ճշմարիտ բարեկամացս։

Ընդունեցէք, խմբագիր տէր, ամենախորին յարգանքներս։

25 Յուլիս 1891 ՄԻՓԱԵԼ ԹՈՎՄԱՍԵԱՆ

Իզմիր

Խմբագիր-Տնօրէն Մ· ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՆՈՒՊԱՐԵԱՆ ԲԱՌԱՐԱՆ

ՖՐԱՆՍԵՐԵՆԷ ՀԱՅ ԱՇԽԱՐՀԻԿ

Խնդահիմ է այն լուրը թէ՝ սոյն հայակապ և բազմավաստ երկասիրութեան տպագրութիւնն աւարտելու մօտ է։ Ի հարկէ բաժանորդագրութիւնն ալ պիտի փակուի մօտոյ։ Հետևապէս թէ այն Մեծարգոյ բաժանորդներն որոց բաժնեգինք անվճար կ'ընան, և թէ այն ազդայինք որ կ'փափաքին 20 Ֆրանքով ընտիր բառարանի մը տէր ինել պիտի փութան անյապաղ կարգադրել իրենց հաշիւն և բաժանորդագրութեան փակուելէն ետք՝ գինն 30 Ֆրանք պիտի լինի։

Նոպարեան բառարանն ոչ միայն Ֆրանսագէտ բանասէրներու ուսումնասիրութեան առարկայ, այլ և ամեն անոնց որ Ֆրանսերէն լեզուով կ'պարապին կարևոր ուղեցոյց մը լինելու սահմանուած գործ մ'է։ Բայց աստի՝ ստուարութեան և ճոխ պարունակութեան նպատիվ՝ բառարարին գինը չատ ժան է և ամեն քսակի հպելի։ Ուստի յուսալի է որ, թէ ի քաջալերութիւն բազմարդիւն բառագրին և թէ օգտաչատ գործ մ'աժան գնով ձեռք ձգելու համար, բաժանորդագրութիւնը նոր մլուխ մը ստանայ։

ՊԱՏՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԵԱՆ

Ամենեւեան Մամլոյ տարեդլխին է Զմիւռնիոյ համար 3½ արծաթ մէճիտիէ, իսկ դուրսերու համար՝ 4։

Բաժանորդագրութիւնն տարեկան է, և ծանոթարէ կ'ախոր ով որ տարուան ընթացքին մէջ բաժանորդագրի, արդէն հրատարակեալ ամսագրերը կ'ընդունի։

Ամէն դասատուայ համար տարեդլխին է 2½ մէճիտիէ։

Խմբագրութեանս վերաբերեալ ամէն նամակ, յեռադիր պէտք է ուղղել առ Խմբագիրը–Տնօրէնն Մ. Մամուրեան։

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Բաժանորդ գրուիլ ու դադը վճարել դիմել
ՋՄԻՒՌՆԻԱ առ Խմբագիրը–Տնօրէնն։
կ. ՊՕԼԻՍ Մեծ. Ն. կ. Պէրպէրեան։ Լաւն Զապթիէ Խաթունէ, 63։
ՏՐԱԶՈՆԶՈՆ » Դասատն Ս. Զէյնկիրեան։
ԴԱՎՐԼԻՃ Ազատ խան Ալֆատօղլեանց։։
ՊՕՍԹՈՒՇԱՆ Ընժ. Տ. Պօղոս Յակոբեան։
ՄԱՐՍԷԼԻՈՒ Տես. Ս. Միրզայեանց։ M. S. Mırzayantz. MARSEILLE.
ՄԱՆՉԷՍԹԷՐ Մեծ. Տ'Կրան վարպետեան։ M. Dieran Varbédyant MANCHESTER
ԿԱՐԻՆ Մեծ. վ. Մատոսեան։
ԱՐԱԲԿԻՐ Մեծ. Ս. Ամատեան։
ՍԵԲԱՍՏԻԱ Մեծ. Ա. Զամճեանեան։
ԱՄԱՍԻԱ Մեծ. Յ. Սէվէնեան